Հավելված N1
Հայաստանի Հանրապետության
պետական եկամուտների կոմիտեի նախագահի
2020 թվականի ապրիլի 17-ի
N 337-Ն հրամանի

Ձև

ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀՐԱՊԱՐԱԿՎՈՂ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ
ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
Հիմնադրամի հոգաբարձուների
խորհրդի 28-06-2024 թ. որոշմամբ
«ԴԻԼԻՋԱՆԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԴՊՐՈՑ, ՀԱՅԱՍՏԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ»
Հ Ա Շ Վ Ե Տ Վ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն
հիմնադրամի 2023 թ. գործունեության մասին

1. Հիմնադրամի՝		
1.1 Լրիվ անվանումը		ԴԻԼԻՋԱՆԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԴՊՐՈՑ, ՀԱՅԱՍՏԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ
1.2 Գտնվելու վայրը		ՏԱՎՈՒՇ ԴԻԼԻՋԱՆ ԴԻԼԻՋԱՆ ԳԵՏԱՓՆՅԱ ՓՈՂ. 7
1.3 Պետական գրանցման համարը		222.160.32098
1.4 Պետական գրանցման տարին, ամիսը, ամսաթիվը		2011-09-01
1.5 ՀՎՀՀ-ն		00108599
1.6 Հեռախոսը (այդ թվում՝ բջջային)		+(374)060750800
		+(374)093878402
1.7 Պաշտոնական ինտերնետային կայքը		https://www.uwcdilijan.org
1.8 Էլեկտրոնային փոստը		a.tumanyan@uwcdilijan.am
2. Հիմնադրի անուն, ազգանուն կամ անվանում՝		
3. Հոգաբարձուների խորհրդի անդամների անուն, ազգանուն՝		
4. Կառավարչի անուն, ազգանուն՝		
Ադամ Ալֆրեդ Արմանսկի		
5. Աշխատակազմում ընդգրկված անձանց քանակը	87	
6. Անձեռնմխելի կապիտալի չափը		
7. Անձեռնմխելի կապիտալի կառավարումից ստացված եկամուտ		
8. Ֆինանսավորման աղբյուրները՝		
8.1 Ֆինանսավորումն ըստ խմբերի	8.2 Ստացված ֆինանսական միջոցների նպատակը	8.3 Չափը
8.1.1 Պետական և համայնքային բյուջեներից դրամական մուտքեր		
8.1.2 Իրավաբանական անձանցից դրամական մուտքեր		
	Հանրակրթական	983,950,315
8.1.3 Ֆիզիկական անձանցից դրամական մուտքեր		
	Հանրակրթական	1,760,172,805
9. Հիմնադրի ներդրումը՝		
9.1 Դրամական միջոցներ		

9.2 Գույք	9.2.1 Տեսակը	9.2.2 Արժեքը
10. Նվիրատվությունները/ նվիրաբերությունները		
10.1 Նվիրատուները/նվիրաբերողներն ըստ խմբերի՝	10.2 Նվիրված/նվիրաբերված գույք	
	10.2.1 Տեսակը	10.2.2 Արժեքը
10.1.1 Հայաստանի Հանրապետություն/համայնքներ		
10.1.2 Իրավաբանական անձինք		
10.1.3 Ֆիզիկական անձինք		
	Իսպանական Կիթառ	80,000
	Էլեկտրական թմբուկի հավաքածու	120,000
	Մեծ թենիսի ռակետ	64,000
	Դահուկորդի կոշիկ	109,000
	Արշավային ուսապարկ	32,000
11. Իրականացված ծրագրերը՝		
11.1 Ծրագրի անվանումը	11.2 Ծախսված գումարը	
Հանրակրթական	2,890,219,575	
12. Ֆինանսական տարում օգտագործված միջոցների ընդհանուր չափը	3,270,052,270	
13. Կանոնադրական նպատակների իրականացմանն ուղղված ծախսերի չափը	2,890,219,575	

Նշումներ՝

Ֆինանսական հաշվետվություններն ու ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ աուդիտն իրականացնող անձի (աուդիտորի) եզրակացությունը՝ 45 էջերից:

էջերի քանակը

Հիմնադրամի տնօրեն _____

ստորագրությունը, անունը, ազգանունը

Գլխավոր հաշվապահ _____

ստորագրությունը, անունը, ազգանունը

Ֆինանսական հաշվետվություններ և Անկախ աուդիտորի եզրակացություն

«Դիլիջանի միջազգային դպրոց, Հայաստան» Հիմնադրամ

31 դեկտեմբերի 2023թ.

Բովանդակություն

Անկախ աուդիտորի եզրակացություն	3
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն	6
Գործունեության մասին հաշվետվություն	8
Զուտ ակտիվներում փոփոխությունների մասին հաշվետվություն	9
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն	10
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ	11

Անկախ աուդիտորի եզրակացություն

Գրանթ Թորնթոն ՓԲԸ
Երևան Պլազա բիզնես կենտրոն
ՀՀ, ք. Երևան 0015
Գրիգոր Լուսավորչի 9
Հ. + 374 10 50 09 64/61

Grant Thornton CJSC
Yerevan Plaza Business Center
9 Grigor Lusavorich Street,
Yerevan 0015, Republic of Armenia
T + 374 10 50 09 64/61

«Դիլիջանի միջազգային դպրոց, Հայաստան» Հիմնադրամի Կառավարման խորհրդին

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «Դիլիջանի միջազգային դպրոց, Հայաստան» Հիմնադրամի (Հիմնադրամ) ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա գործունեության մասին հաշվետվությունը, զուտ ակտիվներում փոփոխությունների մասին հաշվետվությունը և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ հաշվապահական հաշվառման քաղաքականության էական մասերի վերաբերյալ համառոտագիրը:

Մեր կարծիքով՝ կից ֆինանսական հաշվետվությունները տալիս են Հիմնադրամի՝ 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի և նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքների ու դրամական հոսքերի ճշմարիտ և իրական պատկերը՝ համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ-ներ):

Կարծիքի հիմքեր

Մենք աուդիտն անցկացրել ենք աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է մեր եզրակացության՝ *«Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար»* բաժնում: Մենք անկախ ենք Հիմնադրամից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված *«Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի»* (ՀԷՄՍԽ կանոնագիրք) և էթիկայի համապատասխան պահանջների, որոնք կիրառելի են ֆինանսական հաշվետվությունների մեր աուդիտի նկատմամբ Հայաստանի Հանրապետությունում, և կատարել ենք էթիկայի գծով մեր այլ պարտականությունները՝ էթիկայի նշված պահանջների համաձայն: Մենք համոզված ենք, որ մեր կողմից ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:

Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ-ների համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է Հիմնադրամի՝ անընդհատ գործելու կարողությունը գնահատելու համար, համապատասխան դեպքերում անընդհատության հետ կապված հարցերը բացահայտելու և Հիմնադրամի գործունեության անընդհատության ենթադրության հիման վրա հաշվետվությունները պատրաստելու համար, բացառությամբ այն դեպքերի, երբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված իրավասու մարմինը մտադիր է լուծարել Հիմնադրամը, ընդհատել դրա գործունեությունը կամ, երբ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձիք պատասխանատու են Հիմնադրամի ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից՝ անկախ դրանց՝ խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի արդյունքում և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած կազդեն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

Որպես ԱՄՍ-ներին համապատասխան աուդիտի մաս, աուդիտի ողջ ընթացքում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում ենք մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- Որոշակիացնում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար ու համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության պատճառով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության չարաշահում:

- Ձեռք ենք բերում պատկերացում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, այլ ոչ թե Հիմնադրամի ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:
- Գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և համապատասխան բացահայտումների ողջամտությունը:
- Եզրահանգումներ ենք կատարում ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և, հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա, գնահատում ենք՝ արդյոք առկա է դեպքերի կամ հանգամանքների հետ կապված էական անորոշություն, որը կարող է նշանակալի կասկած հարուցել Հիմնադրամի անընդհատ գործելու կարողության վերաբերյալ: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորի եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Այնուամենայնիվ, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Հիմնադրամին դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը:
- Գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Կառավարման օղակներում գտնվող անձանց, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտորական առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

Արմեն Հովհաննիսյան
Տնօրեն

Էմիլ Վասիլյան, FCCA
Առաջադրանքի պատասխանատու

14 հունիսի 2024թ.

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

Հազար դրամ	Ծանոթ.	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ակտիվներ			
Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ	4	122,847	160,999
Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ	5	1,410,334	1,487,733
Ոչ նյութական ակտիվներ		16,397	19,052
Հետաձգված հարկային ակտիվներ	6	10,517	-
		1,560,095	1,667,784
Ընթացիկ ակտիվներ			
Պաշարներ		32,846	36,060
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	7	57,977	89,974
Հետաձգված ծախսեր	8	116,193	106,728
Ժամկետային ավանդներ	9	419,851	214,193
Մնացորդներ դրամարկղում և բանկերում	10	1,204,803	1,402,270
		1,831,670	1,849,225
Ընդամենը ակտիվներ		3,391,765	3,517,009

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն (շարունակություն)

Հազար դրամ	Ծանոթ.	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Պարտավորություններ			
Ոչ ընթացիկ պարտավորություններ			
Վարձակալության գծով պարտավորություն	11	1,168,547	1,232,652
Ակտիվներին վերաբերող շնորհներ	12	29,403	54,397
		1,197,950	1,287,049
Ընթացիկ պարտավորություններ			
Հետաձգված եկամուտ	13	719,148	672,961
Վարձակալության գծով պարտավորություն	11	300,214	289,936
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	14	196,070	202,717
Եկամտին վերաբերող շնորհներ	12	256,830	263,290
Ընթացիկ հարկային պարտավորություններ		4,625	2,601
		1,476,887	1,431,505
Զուտ ակտիվներ		716,928	798,455
		716,928	798,455
Ընդամենը պարտավորություններ և զուտ ակտիվներ		3,391,765	3,517,009

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են 2024թ. հունիսի 4-ին:

Ադամ Ալֆրեդ Արմանսկի
Տնօրեն

Արժանիկ Թումանյան
Գլխավոր հաշվապահ

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 11-ից մինչև 45-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Գործունեության մասին հաշվետվություն

Հազար դրամ	Ծանոթ.	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Հասույթ	15	2,138,237	2,013,190
Անսահմանափակ օգտագործման նվիրատվություններից մուտքեր		213,571	343,219
Սահմանափակ օգտագործման նվիրատվություններից մուտքեր		635,809	716,819
Ակտիվներին վերաբերող շնորհներից մուտքեր		27,314	25,264
Համախառն եկամուտ		3,014,931	3,098,492
Այլ եկամուտ		7,788	22,153
Գործառնական ծախսեր	16	(3,019,891)	(2,899,805)
Գործառնական եկամուտ		2,828	220,840
Ֆինանսական ծախս, զուտ	17	(89,780)	(15,400)
Փոխարժեքային տարբերությունից վնաս		(508)	(273,350)
Վնաս մինչև հարկումը		(87,460)	(67,910)
Շահութահարկի գծով (ծախս)/փոխհատուցում	18	5,933	(2,563)
Տարվա վնաս		(81,527)	(70,473)

Գործունեության մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 11-ից մինչև 45-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Զուտ ակտիվներում փոփոխությունների մասին հաշվետվություն

Հազար դրամ	Զուտ ակտիվներ
2022թ. հունվարի 1-ի դրությամբ	868,928
Տարվա վնաս	(70,473)
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	798,455
Տարվա վնաս	(81,527)
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	716,928

Զուտ ակտիվներում փոփոխությունների մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 11-ից մինչև 45-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Մուտքեր ուսման վճարներից	1,650,895	1,629,203
Մուտքեր նվիրատվություններից	793,033	1,084,286
Մուտքեր ամառային ճամբարի ծառայություններից	250,169	150,571
Մուտքեր նախադպրոցական ծառայություններից	7,574	4,475
Մուտքեր բրենդային ապրանքների վաճառքից	2,800	4,169
Այլ մուտքեր, զուտ	(5,475)	(1,125)
Վճարում մատակարարներին	(1,361,772)	(1,328,277)
Վճարում աշխատակազմին	(1,281,744)	(1,332,429)
Ֆինանսական աջակցության տրամադրում	(500)	(13,741)
Կանխավճարներ ուսանողներից	4,282	12,617
Պետական բյուջե վճարված դրամական միջոցներ	(23,713)	(16,506)
Վճարված շահութահարկ	(2,563)	(5,014)
Գործառնական գործունեությունից ստացված զուտ դրամական միջոցներ	32,986	188,229
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերում	(48,777)	(47,352)
Մուտքեր պարտքային արժեթղթերում ներդրումներից	-	302,933
Ժամկետային ավանդների մարում/(ներդրում)	(191,500)	123,780
Ստացված տոկոսային եկամուտ	6,568	26,757
Ներդրումային գործունեությից ստացված/(գործունեության համար օգտագործված) զուտ դրամական միջոցներ	(233,709)	406,118
Դրամարկղում և բանկերում մնացորդների զուտ աճ/(նվազում)	(200,723)	594,347
Արտարժույթի փոխարժեքի ազդեցությունը դրամական միջոցների վրա	3,256	(163,938)
Դրամարկղում և բանկերում մնացորդներ տարվա սկզբում	1,402,270	971,861
Դրամարկղում և բանկերում մնացորդներ տարվա վերջում	1,204,803	1,402,270

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 11-ից մինչև 45-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

1 Գործառնությունների բնույթը և ընդհանուր տեղեկատվություն

««Դիլիջանի միջազգային դպրոց, Հայաստան» Հիմնադրամը (Հիմնադրամ) հիմնադրվել և գտնվում է Հայաստանի Հանրապետությունում: Հիմնադրամը ոչ առևտրային կազմակերպություն է, որի հիմնադիրներն են՝

- Ռուբեն Վարդանյանը,
- Վերոնիկա Զոնաբենդը, և
- ՌՎՎԶ հիմնադրամը, որը ստեղծվել և գործում է Լիխտենշտեյնի օրենսդրությանը համապատասխան:

Կառավարման խորհուրդը կազմված է 15 անդամներից, որոնցից 13-ը նշանակվում են: 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Հիմնադրամի աշխատակիցների թիվը կազմել է 102 (2022թ. դեկտեմբերի 31-ին՝ 96 աշխատակից):

Դպրոցն իր գործունեությունը սկսել է 2014թ. սեպտեմբերին: 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Հիմնադրամում ուսանել է 218 ուսանող (2022թ. դեկտեմբերի 31-ին՝ 217 ուսանող):

Հիմնադրամի հիմնական նպատակներն են.

- Անգլերեն, հայերեն, ռուսերեն և այլ լեզուներով ակադեմիական բարձրագույն կրթական ծառայությունների տրամադրումը՝ տարբեր երկրներից հրավիրված բարձրակարգ մասնագետների, դասախոսների և ուսուցիչների, ինչպես նաև տեղական բարձրակարգ մասնագետների, դասախոսների և ուսուցիչների ներգրավմամբ,
- Բազմաթիվ տաղանդավոր և ընդունակ աշակերտների ներգրավումը՝ ապահովելով վերջիններիս ինտելեկտուալ, բարոյական, ֆիզիկական և սոցիալական կարողությունների բազմակողմանի և ներդաշնակ զարգացումը,
- Աշխարհի լավագույն համալսարաններում և դպրոցներում ուսումը շարունակելու համար սովորողների նախապատրաստումը՝ շրջանավարտներին բարձրագույն դիպլոմների տրամադրմամբ,
- Հայաստանի, Սփյուռքի և արտասահմանյան երկրների երիտասարդների միջև կայուն և երկարաժամկետ հարաբերությունների ձևավորումը և զարգացումը:

Հիմնադրամի գրանցման հասցեն է Հայաստանի Հանրապետություն, Դիլիջան 3903, Գետափնյա փողոց, թիվ 7:

Գործարար միջավայր

Հայաստանում իրականացվող քաղաքական և տնտեսական փոփոխությունները, ինչպես նաև իրավական, հարկային և օրենսդրական համակարգերի զարգացումը շարունակական բնույթ են կրում: Հայաստանի տնտեսության կայունությունը և զարգացումը մեծապես կախված է այս փոփոխություններից: Կառավարությունը հաստատել է արդյունավետ կառավարման իր հանձնառությունը, որը ենթադրում է հակակոռուպցիոն ջանքեր, թափանցիկություն և հաշվետվողականություն:

Իրավիճակն Հայաստանի Հանրապետությունում էլ ավելի է սրվել Ադրբեջանի Հանրապետության կողմից սանձազերծված պատերազմի արդյուքում: Չնայած կնքված զինադադարի համաձայնագրին՝ դեռևս անորոշ են պատերազմի հետևանքները Հայաստանի տնտեսության վրա թե կարճաժամկետ, և թե երկարաժամկետ առումներով:

2023թ. Հայաստանի Հանրապետությունում քաղաքական իրավիճակը շարունակում է մնալ համեմատաբար անկայուն, 44-օրյա Արցախյան պատերազմի հետևանքները դեռևս էական ազդեցություն են ունենում երկրի ընդհանուր տնտեսության վրա: 2023թ. սեպտեմբերին շուրջ 120,000 Արցախաբնակ հայերի բռնի տեղահանումը դեպի Հայաստան լրացուցիչ տնտեսական և քաղաքական ցնցումների առիթ հանդիսացավ: Քաղաքական անկայուն իրավիճակի, միջազգային ճանապարհների պարբերաբար փակման, հրադադարի ռեժիմի կարճաժամկետ խախտումների հետևանքով, դժվար է հստակ կանխատեսել նշված պայմանների տնտեսական ազդեցությունը Հիմնադրամի գործունեության վրա:

2022թ. փետրվարի 24-ին Ուկրաինայում բռնկված հակամարտությունն արագությամբ ծավալվում է՝ զգալի ազդեցություն թողնելով աշխարհի վրա: ԱՄՆ-ն և եվրոպական երկրները կոշտ պատժամիջոցներ են կիրառել Ռուսաստանի Դաշնության դեմ: Ռուսաստանի Դաշնությունը Հայաստանի Հանրապետության էական առևտրատնտեսական գործընկերն է, ուստի սույն ֆինանսական հաշվետվությունների ամսաթվի դրությամբ կիրառվող պատժամիջոցները, ինչպես նաև դրանց ընդարձակումը կարող են լուրջ ազդեցություն ունենալ Հայաստանի Հանրապետության ֆինանսական շուկաների և ամբողջ տնտեսության վրա: Համաշխարհային մակարդակով ավելի խոր պատժամիջոցներ կիրառելը կարող է հանգեցնել բարձր գնաճի, ֆինանսական շուկաների աճի տեմպի նվազման և որոշակի խաթարման:

Ուկրաինայում բռնկված հակամարտությունը պատճառ դարձավ, որ հազարավոր ռուսներ և ուկրաինացիներ տեղափոխվեն Հայաստանի Հանրապետություն: Սա վերաբերում է ոչ միայն անհատներին, այլ նաև ձեռնարկություններին, որոնք հիմնադրվել և իրենց գործունեությունը ծավալել են այդ երկրներում: Դա հանգեցրեց հայկական շուկա արտարժույթի ներհոսքի ավելացմանը, ինչի հետևանքով հայկական դրամը զգալի արժևորվեց ԱՄՆ դոլարի և եվրոյի նկատմամբ: Մյուս կողմից, ՀՀ կենտրոնական բանկը ոչ մի միջոց չձեռնարկեց, որպեսզի թուլացնի հայկական ազգային արժույթի դիրքերը:

Հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում նկատվել է փոխարժեքի կայունություն, հետևաբար ղեկավարությունը չի ակնկալում, որ ԱՄՆ դոլարի և եվրոյի նկատմամբ հայկական դրամի հետագա արժևորում կլինի: Այնուամենայնիվ, Հայաստանի Հանրապետությունում առկա տնտեսական և քաղաքական իրավիճակները, ինչպես նաև Ուկրաինայում շարունակվող հակամարտությունը կարող են բացասական ազդեցություն ունենալ Հիմնադրամի ֆինանսական կայունության վրա, որի ամբողջական հետևանքները այս պահին դժվար է կանխատեսել:

Ղեկավարությունը վերլուծել է այդ հանգամանքների ազդեցությունը Հիմնադրամի անընդհատ գործելու կարողության վրա և եզրակացրել, որ նույնիսկ ամենաբարդ սցենարի դեպքում Հիմնադրամը կկարողանա առանց ընդհատումների գործել առաջիկա 24 ամիսների ընթացքում: Այս ժամանակահատվածում ղեկավարությունը գնահատում է, որ նրանք կկարողանան մեղմել բացասական ազդեցությունը՝ դիվերսիֆիկացնելով ֆինանսավորման աղբյուրները: Այս գնահատումը հիմնավորվում է նրանով, որ Հիմնադրամը հանդիսանում է Միացյալ Համաշխարհային Քոլեջներ (ՄՀՔ) շարժման անդամ, որն ունի ազգային կոմիտեներ ավելի քան 150 երկրներում՝ 18 դպրոցներով և քոլեջներով՝ աշխարհի 4 մայրցամաքներում, և, հետևաբար, վերը նշված ազդեցությունը ընթացիկ ֆինանսական հաշվետվությունների վրա համարվում է ոչ էական:

Վերոնշյալ իրադարձությունները կարող են հետագայում էական ազդեցություն ունենալ Հիմնադրամի ապագա գործունեության և ֆինանսական կայունության վրա, որոնց ամբողջական հետևանքները դժվար է կանխատեսել ներկա պահին: Ապագա տնտեսական և

քաղաքական իրավիճակը և վերջիններիս ազդեցությունը Հիմնադրամի գործունեության վրա կարող են տարբերվել Հիմնադրամի ղեկավարության ներկա սպասումներից:

Ղեկավարության կարծիքով՝ վերոգրյալ իրադարձությունները չեն կարող էական ազդեցություն ունենալ Հիմնադրամի ակտիվների արժեքի, կամ Հիմնադրամի՝ անընդհատ գործելու ունակության վրա: Ներկայիս տնտեսական իրավիճակի և կառավարության կողմից ձեռնարկված միջոցառումների ապագա ազդեցությունները դժվար է կանխատեսել, և ղեկավարության ներկա սպասումներն ու գնահատականները կարող են տարբերվել իրական արդյունքներից:

Տվյալ ֆինանսական հաշվետվությունները չեն արտացոլում վերը նկարագրվածի հնարավոր ապագա ազդեցությունը Հիմնադրամի գործունեության վրա:

2 Պատրաստման հիմքերը

2.1 Համապատասխանություն

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ) համաձայն, ինչպես հրապարակվել է Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) կողմից: Հաշվետվությունները պատրաստվել են՝ հիմնվելով այն գնահատման վրա, որ Հիմնադրամն իր գործունեությունն իրականացնում է անընդհատության սկզբունքից ելնելով:

Ներկայումս ՖՀՄՍ-ները չեն պարունակում հաշվապահական հաշվառման վարման և ֆինանսական հաշվետվությունների ներկայացման վերաբերյալ հատուկ ուղեցույցներ շահույթ չհետապնդող և ոչ կառավարական կազմակերպությունների համար: Եթե ՖՀՄՍ-ները չեն տալիս ուղղություն շահույթ չհետապնդող ոլորտի կազմակերպություններին հատուկ գործարքների հաշվառման վերաբերյալ, ապա հաշվապահական հաշվառման քաղաքականությունը պետք է հիմնվի ՖՀՄՍ-ների ընդհանուր սկզբունքների վրա՝ համաձայն Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) *«Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ներկայացման հայեցակարգային հիմունքների»*:

2.2 Չափման հիմքեր

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են հաշվեգրման սկզբունքով և սկզբնական արժեքի մեթոդով:

2.3 Գործառնական և ներկայացման արժույթ

Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը հայկական դրամն է (դրամ), որն էլ հանդիսանում է Հիմնադրամի գործառնական արժույթը, քանի որ այն լավագույնս արտացոլում է ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած իրադարձությունների և Հիմնադրամի գործարքների տնտեսական բովանդակությունը:

Սույն ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են հայկական դրամով (եթե այլ բան նշված չէ), քանի որ, ղեկավարության համոզմամբ, այս արժույթն առավել օգտակար է Հիմնադրամի ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների համար: Դրամով ներկայացված ամբողջ ֆինանսական տեղեկատվությունը կլորացված է մինչև մոտակա հազար միավորը:

2.4 Գնահատումների և դատողությունների կիրառում

ՖՀՄՍ-ներին համապատասխան ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը պահանջում է, որպեսզի Հիմնադրամի ղեկավարությունը կարևոր գնահատումներ և ենթադրություններ կատարի, որոնք ազդեցություն են գործում ֆինանսական

հաշվետվությունների ամսաթվի դրությամբ ակտիվների և պարտավորությունների գումարների, ինչպես նաև հաշվետու տարվա եկամուտների և ծախսերի գումարների վրա: Առավել մեծ դատողություն պահանջող և բարդություն ներկայացնող էական ոլորտները, կամ այն ոլորտները, որտեղ ենթադրություններն ու գնահատումներն էական են ֆինանսական հաշվետվությունների համար, բացահայտված են ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություն 19-ում:

2.5 Նոր և վերանայված ստանդարտների ընդունում

Ընթացիկ տարում Հիմնադրամն ընդունել է իր գործունեության համար կիրառելի և 2023թ. հունվարի 1-ից սկսվող ժամանակաշրջանների համար ուժի մեջ մտած բոլոր նոր և վերանայված ստանդարտները և մեկնաբանությունները, որոնք հրապարակվել են Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) և ՀՀՄՍԽ-ի Մեկնաբանման կոմիտեի (ՄԿ) կողմից:

Նշված փոփոխությունների բնույթը և ազդեցությունը բացահայտված են ստորև:

Նոր և վերանայված ստանդարտներ և մեկնաբանություններ, որոնք կիրառելի են 2023թ. հունվարի 1-ից և դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար

Ներքոհիշյալ նոր ստանդարտներն ու փոփոխությունները, որոնք առաջին անգամ կիրառվել են 2023թ., որևէ էական ազդեցություն չեն ունեցել Հիմնադրամի ֆինանսական հաշվետվությունների վրա:

Ստանդարտ	Ստանդարտի կամ մեկնաբանության անունը	
ՖՀՄՍ 17	*Փոփոխություններ Ապահովագրական պայմանագրերում ՖՀՄՍ 17, ներառյալ ՖՀՄՍ 9-ի կիրառումից ժամանակավոր ազատման երկարաձգումը (ՖՀՄՍ 4 փոփոխություններ)*	*1 հունվարի 2023թ.*
ՀՀՄՍ 12	*Մեկ գործարքից առաջացող ակտիվներին և պարտավորություններին վերաբերող հետաձգված հարկ (ՀՀՄՍ 12 փոփոխություններ)*	*1 հունվարի 2023թ.*
ՀՀՄՍ 17	*ՖՀՄՍ 17-ի և ՖՀՄՍ 9-ի սկզբնական կիրառում – Համեմատական տեղեկատվություն (ՖՀՄՍ 17 փոփոխություն)*	*1 հունվարի 2023թ.*
ՀՀՄՍ 8	*Հաշվապահական հաշվառման գնահատումների սահմանում(ՀՀՄՍ 8 փոփոխություններ)*	*1 հունվարի 2023թ.*
ՀՀՄՍ 1	*Հաշվապահական հաշվառման քաղաքականության բացահայտում (ՀՀՄՍ 1 և ՖՀՄՍ Գործնական կիրառություն 2)*	*1 հունվարի 2023թ.*
ՀՀՄՍ 12	*Միջազգային հարկային բարեփոխումներ – Pillar 2 կանոններ (ՀՀՄՍ 12 փոփոխություն)*	*1 հունվարի 2023թ*
ՖՀՄՍ ՓՄՁ-ների համար	*Միջազգային հարկային բարեփոխումներ – Pillar 2 մոդելային կանոններ (ՖՀՄՍ ստանդարտի փոփոխություն ՓՄՁ-ների համար)*	*1 հունվարի 2023թ*

Ստանդարտներ, փոփոխություններ և մեկնաբանություններ գործող ստանդարտների վերաբերյալ, որոնք դեռևս չեն գործում և նախօրոք չեն ներդրվել Հիմնադրամի կողմից

Այս ֆինանսական հաշվետվությունների հաստատման ամսաթվի դրությամբ Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) կողմից թողարկվել են որոշակի նոր ստանդարտներ, փոփոխություններ և մեկնաբանություններ գործող ստանդարտների վերաբերյալ, որոնք սակայն դեռևս չեն գործում և նախօրոք չեն ներդրվել Հիմնադրամի կողմից:

Ղեկավարությունը կանխատեսում է, որ բոլոր կիրառելի հրապարակումները կներդրվեն Հիմնադրամի հաշվապահական հաշվառման քաղաքականությունում սկսած հրապարակման ուժի մեջ մտնելու ամսաթվին հաջորդող առաջին իսկ ժամանակաշրջանից:

Ղեկավարության կանխատեսմամբ այս փոփոխությունները էական ազդեցություն չեն ունենա Հիմնադրամի ֆինանսական հաշվետվությունների վրա և ներկայացված են ստորև.

Ստանդարտ	**Ստանդարտի կամ մեկնաբանության անունը**	**Տվյալ ամսաթվին կամ դրանից հետո սկսվող հաշվետու ժամանակաշրջանների համար կիրառելի**
ՀՀՄՍ 1	*Պարտավորությունների դասակարգումը որպես ընթացիկ կամ ոչ ընթացիկ (ՀՀՄՍ 1 փոփոխություն)*	*1 հունվարի 2024թ.*
ՖՀՄՍ 16	*Վարձակալության պարտավորություն Վաճառքի և հետադարձ վարձակալության գործարքի ժամանակ (ՀՀՄՍ 16 փոփոխություն)*	*1 հունվարի 2024թ.*
ՀՀՄՍ 1	*Ոչ-ընթացիկ պարտավորություններ պայմանագրերի հետ* *(ՀՀՄՍ 1 փոփոխություն)*	*1 հունվարի 2024թ.*
ՀՀՄՍ 7 և ՖՀՄՍ 7	*Մատակարարների ֆինանսական պայմանավորվածություններ (ՀՀՄՍ 7 և ՖՀՄՍ 7 փոփոխություններ)*	*1 հունվարի 2024թ.*
ՀՀՄՍ 21	*Փոխանակելիության բացակայություն (ՀՀՄՍ 21 փոփոխություն)*	*1 հունվարի 2025թ.*

3 Հաշվապահական հաշվառման էական քաղաքականություն

3.1 Արտարժույթ

Արտարժույթով գործարքներ

Ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս Հիմնադրամի համար գործառնական արժույթից տարբեր այլ արժույթով իրականացված գործարքները գրանցվում են գործարքի օրվա դրությամբ Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի (ՀՀ ԿԲ) կողմից հրապարակված փոխարժեքով: Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով դրամային հոդվածները վերահաշվարկվում են՝ կիրառելով հաշվետու ամսաթվի դրությամբ ՀՀ ԿԲ-ի կողմից հրապարակված փոխարժեքը. 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 1 ԱՄՆ դոլարը կազմում էր 404.79 ՀՀ դրամ, 1 եվրոն՝ 447.90 ՀՀ դրամ (2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 1 ԱՄՆ դոլարը կազմում էր 393.57 ՀՀ դրամ, 1 եվրոն՝ 420.06 ՀՀ դրամ): Ոչ դրամային հոդվածները չեն վերահաշվարկվում և չափվում են պատմական արժեքով (հաշվարկվում են՝ օգտագործելով գործարքի օրվա դրությամբ գործող փոխարժեքը), բացառությամբ իրական արժեքով հաշվառվող և արտարժույթով

արտահայտված ոչ դրամային հոդվածների, որոնք վերահաշվարկվում են իրական արժեքի չափման օրվա դրությամբ գործող փոխարժեքով:

3.2 Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները: Սկզբնական արժեքը ներառում է ձեռքբերման գինը, ներկրման տուրքերը, հարկերը, որոնք ենթակա չեն վերադարձման և ուղղակիորեն վերագրվող ծախսումներ: Երբ հիմնական միջոցների միավորը բաղկացած է տարբեր օգտակար ծառայության ժամկետ ունեցող խոշոր բաղկացուցիչներից, դրանք հաշվառվում են որպես հիմնական միջոցի առանձին միավորներ:

Հիմնական միջոցի օտարման կամ դուրսգրման հետևանքով առաջացած օգուտը կամ վնասը որոշվում է վաճառքից հասույթի և ակտիվի հաշվեկշռային արժեքի տարբերությամբ և ճանաչվում է տարվա արդյունքում:

Հիմնական միջոցի՝ որպես առանձին ակտիվ հաշվառվող միավորի բաղկացուցչի փոխարինման ծախսումները կապիտալացվում են դուրս գրված բաղկացուցչի հաշվեկշռային արժեքի հետ: Այլ հետագա ծախսումները կապիտալացվում են միայն այն ժամանակ, երբ դրանք ավելացնում են հիմնական միջոցի միավորի հետ կապված ապագա տնտեսական օգուտները: Բոլոր այլ ծախսումները, ներառյալ պահպանման և վերանորոգման ծախսումները, ճանաչվում են տարվա արդյունքում՝ կատարվելու ժամանակաշրջանում:

Մաշվածությունը ճանաչվում է տարվա արդյունքում կամ ավելացվում է այլ ակտիվի սկզբնական արժեքին՝ կիրառելով գծային մեթոդը հիմնական միջոցի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում: Մաշվածության հաշվարկը սկսվում է այն պահից, երբ ակտիվը դառնում է մատչելի՝ իր նպատակային նշանակությամբ օգտագործելու համար: Հիմնական միջոցների գնահատված օգտակար ծառայության ժամկետները ներկայացված են ստորև.

Սարքավորումներ և շինություններ	-	3-7 տարի
Տրանսպորտային միջոցներ	-	10 տարի:

Քանի որ հողի համար հնարավոր չէ որոշել վերջավոր օգտակար ծառայության ժամկետ, համապատասխան հաշվեկշռային արժեքը չի ամորտիզացվում:

3.3 Ոչ նյութական ակտիվներ

Ոչ նյութական ակտիվները, որոնք ձեռք են բերվել Հիմնադրամի կողմից և ունեն օգտակար ծառայության որոշակի ժամկետ, ներկայացված են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան և արժեզրկումից կորուստները:

Ամորտիզացիան ճանաչվում է տարվա արդյունքում կամ ավելացվում է այլ ակտիվի սկզբնական արժեքին՝ կիրառելով գծային մեթոդը ոչ նյութական ակտիվի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում, որը կազմում է 1-5 տարի:

3.4 Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների արժեզրկում

Անորոշ օգտակար ծառայության ժամկետ ունեցող ակտիվները չեն ամորտիզացվում և յուրաքանչյուր տարի ենթարկվում են արժեզրկման ստուգման: Մաշվող ակտիվներն արժեզրկման համար վերանայվում են, երբ իրադարձությունները և հանգամանքների փոփոխությունները վկայում են այն մասին, որ դրանց հաշվեկշռային արժեքը կարող է չվերականգնվել: Արժեզրկման կորուստը ճանաչվում է այն գումարով, որով ակտիվի հաշվեկշռային արժեքը գերազանցում է փոխհատուցվող գումարը:

Փոխհատուցվող գումարը վաճառքի զուտ գնից և օգտագործման արժեքից առավելագույնն է: Եթե ակտիվի կամ դրամաստեղծ միավորի փոխհատուցվող գումարն ավելի փոքր է նրա հաշվեկշռային արժեքից, ապա ակտիվի կամ դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը նվազեցվում է մինչև փոխհատուցվող գումարը: Արժեզրկումից կորուստներն անմիջապես ճանաչվում են որպես ծախս, բացառությամբ այն դեպքերի, երբ համապատասխան ակտիվը հաշվառվում է վերագնահատված արժեքով, որի դեպքում արժեզրկումից կորուստը դիտվում է որպես վերագնահատումից արժեքի նվազում:

Երբ հետագայում արժեզրկումից կորուստը հակադարձվում է, ապա ակտիվի կամ դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը պետք է ավելացվի մինչև նրա փոխհատուցվող գումարը, բայց այնպես, որ ակտիվի ավելացված հաշվեկշռային արժեքը չգերազանցի այն հաշվեկշռային արժեքը, որը որոշված կլիներ, եթե նախորդ տարիներին այդ ակտիվի կամ դրամաստեղծ միավորի գծով արժեզրկումից կորուստներ ճանաչված չլինեին: Արժեզրկումից կորստի հակադարձումն անմիջապես ճանաչվում է որպես եկամուտ, բացառությամբ այն դեպքերի, երբ համապատասխան ակտիվը հաշվառվում է վերագնահատված արժեքով, որի դեպքում արժեզրկումից կորստի ցանկացած հակադարձում դիտվում է որպես վերագնահատումից արժեքի աճ:

3.5 Հետաձգված ծախսեր

Հետաձգված ծախսերն ակտիվներ են, որոնք ներկայացնում են ապագա այնպիսի ծախսերի կանխավճար, որոնք դեռ տեղի չեն ունեցել: Հետաձգված ծախսերը սովորաբար կապված են ծառայությունների պայմանագրերի հետ, որոնք պահանջում են նախապես վճարում, ինչպիսիք են բժշկական և ճանապարհորդական ապահովագրության ծառայությունների կանխավճարները, Միացյալ Համաշխարհային Քոլեջների և Միջազգային բակալավրիատի Հիմնադրամի անդամավճարները:

3.6 Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ

Հիմնադրամը վարձակալում է գույք: Վարձակալության պայմանագրերը կարող են պարունակել ինչպես վարձակալության, այնպես էլ ոչ վարձակալության բաղադրիչներ: Հիմնադրամը պայմանագրով նախատեսված փոխհատուցումը հատկացնում է վարձակալության և ոչ վարձակալության բաղադրիչներին՝ հիմք ընդունելով դրանց առանձին գները: Այնուամենայնիվ, անշարժ գույքի վարձակալության դեպքում, որոնց դեպքում Հիմնադրամը վարձակալ է հանդիսանում, որոշել է չառանձնացնել վարձակալության և ոչ վարձակալության բաղադրիչների և փոխարենը հաշվառում է այդ պայմանագրերը որպես մեկ վարձակալության բաղադրիչ:

Օգտագործման իրավունքի ձևով ակտիվը չափվում է սկզբնական արժեքով, որը ձևավորվում է.

- վարձակալության գծով պարտավորության սկզբնական չափումից,
- վարձակալության մեկնարկի ամսաթվին կամ նախքան վարձակալության մեկնարկի ամսաթիվը կատարված ցանկացած վարձակալական վճարներից հանած ստացված ցանկացած խրախուսումները,
- ցանկացած սկզբնական ուղղակի ծախսերից, և
- ակտիվը վարձակալության պայմանագրով պահանջվող պայմաններին համապատասխան վերականգնելու ծախսերից:

Օգտագործման իրավունքի ձևով ակտիվները սովորաբար մաշվում են ակտիվի օգտակար ծառայության և վարձակալության ժամկետից ավելի կարճ ժամանակահատվածում գծային հիմունքով: Եթե Հիմնադրամն ունի գնման հնարավորության իրագործման խելամիտ համոզմունք, ապա օգտագործման իրավունքի ձևով ակտիվը մաշվում է հիմքում ընկած ակտիվի օգտակար ծառայության ժամկետի ընթացքում: Օգտագործման իրավունքի ձևով

ակտիվների միավորի մաշվածությունը հաշվարկվում է գծային մեթոդով դրանց օգտակար ծառայության ժամկետների ընթացքում հետևյալ կերպ.

Շենքեր	-	12 տարի
Մեքենաներ, սարքավորումներ	-	10-20 տարի
Տրանսպորտային միջոցներ	-	5-10 տարի:

3.7 Պաշարներ

Պաշարներն այն ակտիվներն են, որոնք պահվում են սովորական գործունեության ընթացքում վաճառքի համար, կամ հումքի, կամ նյութի ձևով՝ արտադրանքի թողարկման կամ ծառայությունների մատուցման ընթացքում օգտագործելու համար: Պահեստամասերը, վթարային սարքավորումները և օժանդակ սարքավորումները նույնպես ճանաչվում են որպես պաշար, եթե դրանք չեն համապատասխանում հիմնական միջոցների սահմանմանը:

Պաշարները հաշվառվում են ինքնարժեքից և իրացման զուտ արժեքից նվազագույնով: Իրացման զուտ արժեքը սովորական գործունեության ընթացքում վաճառքի ձևավորվող գինն է՝ հանած համալրման և վաճառքը կազմակերպելու համար անհրաժեշտ ծախսումները: Պաշարների ինքնարժեքը հաշվարկվում է՝ օգտագործելով առաջին մուտք՝ առաջին ելք (ԱՄԱԵ) մեթոդը, և ներառում է պաշարների ձեռքբերման, ինչպես նաև դրանք իրենց ներկայիս վիճակին և գտնվելու վայր հասցնելու ծախսերը:

3.8 Ֆինանսական գործիքներ

Ֆինանսական գործիքների չափում

Իրական արժեքը սահմանվում է որպես գին, որը չափման ամսաթվի դրությամբ, շուկայի մասնակիցների միջև սովորական գործարքում կստացվեր ակտիվի վաճառքից կամ կվճարվեր պարտավորության փոխանցման դիմաց: Իրական արժեքի լավագույն ապացույցը ակտիվ շուկայի գինն է: Ակտիվ շուկան այն շուկան է, որտեղ ակտիվի կամ պարտավորության գծով գործարքները տեղի են ունենում բավարար հաճախականությամբ և բավարար ծավալով՝ շարունակական հիմունքով գնային տեղեկատվություն տրամադրելու համար:

Ակտիվ շուկայում վաճառվող ֆինանսական գործիքների իրական արժեքը չափվում է որպես առանձին ակտիվի կամ պարտավորության գնանշված գնի և Հիմնադրամի կողմից պահվող գործիքների քանակի արտադրյալ: Դա տեղի է ունենում նույնիսկ այն դեպքում, երբ շուկայի սովորական առևտրի ծավալը բավարար չէ պահվող քանակը կլանելու համար, և մեկ գործարքում դիրքը վաճառելու պատվերներ կատարելը կարող է ազդել գնանշված գնի վրա:

Գնահատման մեթոդները, ինչպիսիք են դրամական միջոցների զեղչված հոսքերի մոդելները կամ մոդելները, որոնք հիմնված են պարզված ձեռքի գործարքների կամ ներդրողների ֆինանսական տվյալների հաշվի վրա, օգտագործվում են որոշակի ֆինանսական գործիքների իրական արժեքը չափելու համար, որոնց համար արտաքին շուկայական գնագոյացման վերաբերյալ տեղեկատվություն հասանելի չէ: Իրական արժեքի չափումները վերլուծվում են ըստ մակարդակների իրական արժեքի հիերարխիայում հետևյալ կերպ՝ 1-ին մակարդակի ելակետային տվյալները նույնական ակտիվների կամ պարտավորությունների համար ակտիվ շուկաների գնանշվող գներ (չճշգրտվող) են, 2-րդ մակարդակի ելակետային տվյալներն այն տվյալներն են, որոնք ուղղակի կամ անուղղակիորեն դիտելի են ակտիվի կամ պարտավորության համար և 3-րդ մակարդակի ելակետային տվյալներն ակտիվի կամ պարտավորության համար ոչ դիտելի տվյալներ են:

Գործարքի հետ կապված ծախսումները հավելյալ ծախսումներ են, որոնք ուղղակիորեն վերագրելի են ֆինանսական գործիքի ձեռքբերմանը, թողարկմանը կամ օտարմանը: Հավելյալ ծախսումն այն ծախսն է, որը չէր կատարվի, եթե գործարքը տեղի չունենար:

Գործարքի հետ կապված ծախսումները ներառում են գործակալներին (ներառյալ որպես վաճառքի գործակալներ հանդես եկող աշխատակիցներին), խորհրդատուներին, բրոքերներին և դիլերներին վճարվող վճարները և միջնորդավճարները, կարգավորող գործակալությունների և արժեթղթերի բորսաների կողմից գանձումները և տրանսֆերային հարկերն ու տուրքերը: Գործարքի հետ կապված ծախսումները չեն ներառում պարտքի հավելավճարները կամ զեղչերը, ֆինանսավորման ծախսերը կամ ներքին վարչական կամ պահպանման ծախսերը:

Ամորտիզացված արժեքը («ԱԱ») այն գումարն է, որով ֆինանսական գործիքը ճանաչվել է սկզբնական ճանաչման ժամանակ՝ հանած մայր գումարի մարումները՝ գումարած հաշվեգրված տոկոսները, և ֆինանսական ակտիվների համար՝ հանած ակնկալվող պարտքային կորուստների պահուստը: Հաշվեգրված տոկոսները ներառում են սկզբնական ճանաչման ժամանակ հետաձգված գործարքի ծախսումների և ցանկացած հավելավճարի կամ զեղչի ամորտիզացիան մինչև մարման ժամկետը՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Հաշվեգրված տոկոսային եկամուտը և հաշվեգրված տոկոսային ծախսը, ներառյալ հաշվեգրված արժեկտրոնը և ամորտիզացված զեղչը կամ հավելավճարը (ներառյալ սկզբնավորման պահին հետաձգված վճարները, եթե այդպիսիք կան), առանձին չեն ներկայացվում և ներառված են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում համապատասխան հոդվածների հաշվեկշռային արժեքներում:

Արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը համապատասխան ժամանակահատվածի ընթացքում տոկոսային եկամուտների և տոկոսային ծախսերի բաշխման մեթոդ է, որը հանգեցնում է հաշվեկշռային արժեքի նկատմամբ կիրառվող հաստատուն պարբերական տոկոսադրույքի (արդյունավետ տոկոսադրույք): Արդյունավետ տոկոսադրույքն այն դրույքն է, որը ֆինանսական գործիքի գործողության ակնկալվող ժամկետի կամ որոշակի դեպքերում ավելի կարճ ժամանակահատվածի համար գնահատված դրամական միջոցների ապագա վճարումները կամ ստացվելիք գումարները (չներառելով ապագա պարտքային կորուստները) զեղչում է ճշգրիտ՝ մինչև ֆինանսական գործիքի համախառն հաշվեկշռային արժեքը: Արդյունավետ տոկոսադրույքը զեղչում է փոփոխական տոկոսադրույք ունեցող գործիքների դրամական միջոցների հոսքերը մինչև հաջորդ տոկոսադրույքի վերագնանշման ամսաթիվը, բացառությամբ այն պարգևավճարի կամ զեղչի, որն արտացոլում է գործիքում սահմանված լողացող տոկոսադրույքի կամ շուկայական դրույքներով չսահմանված այլ փոփոխականների նկատմամբ վարկային սպրեդը: Այդպիսի պարգևավճարները կամ զեղչերն ամորտիզացվում են գործիքի ակնկալվող գործողության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում: Ներկա արժեքի հաշվարկը ներառում է պայմանագրի կողմերի միջև վճարված կամ ստացված բոլոր վճարները, որոնք արդյունավետ տոկոսադրույքի անբաժանելի մասն են կազմում: Այն ակտիվների համար, որոնք սկզբնական ճանաչման ժամանակ ձեռք են բերվել կամ ստացվել են պարտքային արժեզրկումից, արդյունավետ տոկոսադրույքը ճշգրտվում է հաշվի առնելով պարտքային ռիսկը, այսինքն՝ այն հաշվարկվում է սկզբնական ճանաչման ժամանակ ակնկալվող դրամական հոսքերի, այլ ոչ թե պայմանագրային վճարների հիման վրա:

Սկզբնական ճանաչում

Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքները («ԻԱՇՎՄ») սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով: Բոլոր այլ ֆինանսական գործիքները սկզբնապես չափվում են իրական արժեքով՝ գումարած գործարքի հետ կապված ծախսումները: Սկզբնական ճանաչման արդյունքում առաջացած շահույթը կամ վնասը գրանցվում է միայն այն դեպքում, եթե առկա է իրական արժեքի և գործարքի գնի միջև տարբերություն, որը կարող է հաստատվել նույն գործիքով այլ դիտարկելի ընթացիկ շուկայական գործարքներով կամ գնահատման մեթոդով, որի ելակետային տվյալները ներառում են միայն դիտարկվող շուկայական տվյալները: Սկզբնական ճանաչումից հետո ակնկալվող պարտքային կորստի գծով պահուստը ճանաչվում է ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվների և իրական արժեքով չափվող՝ այլ համապարփակ

արդյունքի միջոցով պարտքային գործիքներում ներդրումների համար, ինչը հանգեցնում է հաշվապահական կորուստի:

Ֆինանսական ակտիվների դասակարգումը և սկզբնական չափումը

Հիմնադրամը ֆինանսական ակտիվները դասակարգում է ըստ ամորտիզացված արժեքի չափման կատեգորիայի: Պարտքային ֆինանսական ակտիվների դասակարգումը և հետագա չափումը կախված է (i) ակտիվների պորտֆելի կառավարման համար Հիմնադրամի բիզնես մոդելից և (ii) ակտիվի գծով դրամական միջոցների հոսքերի բնույթից: Բիզնես մոդելն արտացոլում է Հիմնադրամի կողմից ակտիվների կառավարման համար կիրառվող մեթոդը՝ դրամական միջոցների հոսքերի գեներացման նպատակով: Արդյոք Հիմնադրամի նպատակն է՝ (i) ակտիվներից բացառապես ստանալ պայմանագրային դրամական միջոցների հոսքեր («ակտիվների պահում՝ պայմանագրային դրամական միջոցների հոսքերի հավաքագրման համար») կամ (ii) պայմանագրով նախատեսված դրամական միջոցների հոսքերի հավաքագրում, և ակտիվների վաճառքի արդյունքում առաջացած դրամական միջոցների հոսքերի հավաքագրում («ակտիվների պահում՝ պայմանագրային դրամական միջոցների հոսքերի հավաքագրման և վաճառքի համար») կամ այն դեպքում, երբ կիրառելի չէ (i)-ը կամ (ii)-ը, ֆինանսական ակտիվները դասակարգվում են որպես «այլ» բիզնես մոդելի մաս և չափվում են ԻԱՇՎՄ-ով:

Բիզնես մոդելը որոշվում է ակտիվների խմբի համար (պորտֆելի մակարդակով), հիմնվելով այն գործունեության բոլոր համապատասխան ապացույցների վրա, որոնք Հիմնադրամը մտադիր է իրականացնել գնահատման ամսաթվի դրությամբ առկա պորտֆելի համար սահմանված նպատակին հասնելու համար:

Եթե բիզնես մոդելը նախատեսում է ակտիվների պահում պայմանագրով նախատեսված դրամական հոսքերի ստացման կամ պայմանագրով նախատեսված դրամական հոսքերի և վաճառքի համար, ապա Հիմնադրամը գնահատում է, արդյոք պայմանագրային դրամական հոսքերն իրենցից ներկայացված են միայն մայր գումարի և տոկոսի վճարումներ (ՄՄԳՏՎ): Պարունակվող ածանցյալ գործիքներով ֆինանսական ակտիվները դիտարկվում են ամբողջ ծավալով՝ որոշելու, արդյոք նրանց դրամական միջոցների հոսքերը համապատասխանում են ՄՄԳՏՎ-ի հատկանիշներին: Նման գնահատումն իրականացնելիս Հիմնադրամը հաշվի է առնում, թե արդյոք պայմանագրային դրամական միջոցների հոսքերը համապատասխանում են բազային վարկային համաձայնագրին, այսինքն՝տոկոսները ներառում են միայն վարկային ռիսկի, փողի ժամանակային արժեքի, այլ բազային վարկային ռիսկերի և շահույթի մարժայի փոխհատուցումը:

Այն դեպքերում, երբ պայմանագրային պայմաններն առաջացնում են ռիսկի ենթարկվածություն կամ անկայունություն, որն անհամատեղելի է վարկավորման բազային մեխանիզմի հետ, ֆինանսական ակտիվը դասակարգվում և չափվում է ԻԱՇՎՄ-ով: ՄՄԳՏՎ-ի գնահատումը կատարվում է ակտիվի սկզբնական ճանաչման ժամանակ և հետագայում այն չի վերանայվում:

Ֆինանսական ակտիվները վերադասակարգվում են միայն այն դեպքում, երբ ամբողջ պորտֆելի կառավարման բիզնես մոդելը փոխվում է: Վերադասակարգումն ունի առաջընթաց կիրառում և տեղի է ունենում բիզնես մոդելի փոփոխությանը հաջորդող առաջին հաշվետու ժամանակահատվածից սկսած: Ընթացիկ և համեմատական ժամանակաշրջանում Հիմնադրամը չի փոխել իր բիզնես մոդելը և չի կատարել վերադասակարգումներ:

Հիմնադրամը գնահատում է ակնկալվող պարտքային կորուստը («ԱՊԿ») ԱԱ-ով չափվող և այլ համապարփակ արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող՝ («ԻԱԱՀԱՄ») ֆինանսական գործիքների համար: Հիմնադրամը չափում է ԱՊԿ-ն և ճանաչում է պայմանագրային և ֆինանսական ակտիվների արժեզրկման զուտ կորուստը յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ: ԱՊԿ-ի չափումն արտացոլում է՝ (i) անկողմնակալ և հավանականությամբ կշռված գումար, որը որոշվում է հնարավոր արդյունքների շրջանակը

գնահատելով, (ii) փողի ժամանակային արժեքի և (iii) անցյալի իրադարձությունների, ընթացիկ պայմանների և ապագա պայմանների կանխատեսումների մասին ողջամիտ ու օժանդակ տեղեկությունների միջոցով, որոնք հասանելի են առանց որևէ անհարկի ծախսերի և ջանքերի յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում:

Հիմնադրամը կիրառում է պարզեցված մոտեցումը (այսինքն՝ պահուստի մատրիցան), իր առևտրային և այլ դեբիտորական պարտքերի, ներառյալ չվճարված դեբիտորական պարտքերի (պայմանագրային ակտիվների) գործողության ամբողջ ժամանակահատվածի համար ակնկալվող պարտքային կորուստները հաշվարկելիս: Պահուստի մատրիցան հիմնված է առևտրային դեբիտորական պարտքերի գործողության ժամկետի ընթացքում պարտքային կորուստների պատմական փորձի վրա և ճշգրտվում է ապագային առնչվող գնահատումների համար: Ապագային առնչվող գնահատումները ներառում են մակրոտնտեսական գործոններ, ինչպիսիք են ՀՆԱ-ն և գնաճի ցուցանիշները ՀՀ-ում:

Այլ ֆինանսական ակտիվների համար Հիմնադրամը կիրառում է պարտքային ռիսկի մոդելի զգալի աճ: Արժեզրկումից կորուստները ներկայացվում են շահույթի կամ վնասի մասին ֆինանսական հաշվետվության գործառնական ծախսեր տողում:

Եթե ամորտիզացված արժեքով պահվող արժեզրկված ֆինանսական ակտիվի պայմանները վերանայվում են կամ այլ կերպ փոփոխվում են պայմանագրային գործընկերոջ ֆինանսական դժվարությունների պատճառով, արժեզրկումը չափվում է՝ օգտագործելով սկզբնական արդյունավետ տոկոսադրույքը մինչև պայմանների փոփոխությունը: Այնուհետև վերանայված ակտիվը ապաճանաչվում է, և նոր ակտիվը ճանաչվում է իր իրական արժեքով միայն այն դեպքում, եթե ակտիվի ռիսկերն ու օգուտները էականորեն փոխվել են: Սովորաբար դա վկայում է սկզբնական դրամական հոսքերի և նոր ակնկալվող դրամական հոսքերի ներկա արժեքների էական տարբերությունը:

Եթե հետագա ժամանակաշրջանում արժեզրկումից կորստի գումարը նվազում է, և նվազումը կարող է օբյեկտիվորեն կապված լինել արժեզրկումը ճանաչվելուց հետո տեղի ունեցած իրադարձության հետ, ապա նախկինում ճանաչված արժեզրկումից կորուստը հակադարձվում է՝ ճշգրտելով պահուստի հաշիվը տարվա շահույթի կամ վնասի միջոցով:

Ֆինանսական ակտիվները դուրս են գրվում ամբողջությամբ կամ մասնակի, երբ Հիմնադրամը սպառել է ակտիվների հատուցման գործնական վերականգնման ջանքերը, և եկել է այն եզրակացության, որ առկա չէ հատուցման ողջամիտ ակնկալիք: Դուրսգրումն իրենից ներկայացնում է ապաճանաչման իրադարձություն: Հիմնադրամը կարող է դուրս գրել այն ֆինանսական ակտիվները, որոնք դեռ ենթակա են հարկադիր կատարման, երբ Հիմնադրամը ձգտում է ձեռք բերել պայմանագրով նախատեսված գումարները, սակայն ողջամիտ ակնկալիքներ այդ հատուցման վերաբերյալ չկան:

Հիմնադրամն ապաճանաչում է ֆինանսական ակտիվը, երբ. (ա) ակտիվը մարվել է կամ ֆինանսական ակտիվից առաջացող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները կորցրել են իրենց ուժը կամ (բ) Հիմնադրամը փոխանցել է ֆինանսական ակտիվից դրամական հոսքերի նկատմամբ իրավունքները կամ կնքել է ակտիվների փոխանցման պայմանագիր, միաժամանակ (i) փոխանցելով ակտիվի սեփականության հետ կապված բոլոր էական ռիսկերն ու հատույցները կամ (ii) չփոխանցելով և նաև չպահպանելով ակտիվի սեփականության հետ կապված բոլոր էական ռիսկերն ու հատույցները, սակայն չպահպանելով նաև ակտիվի նկատմամբ վերահսկողությունը:

Վերահսկողությունը համարվում է պահպանված, եթե մյուս կողմը գործնականում չի կարող ակտիվն ամբողջությամբ վաճառել չփոխկապակցված երրորդ կողմի՝ առանց վաճառքի վրա լրացուցիչ սահմանափակումներ դնելու անհրաժեշտության:

Ֆինանսական պարտավորությունները դասակարգվում են որպես հետագայում ԱԱ-ով չափվող, բացառությամբ (i) ֆինանսական պարտավորությունների, որոնք չափվում են ԻԱՇՎՄ-ով. տվյալ դասակարգումը կիրառվում է ածանցյալ ֆինանսական գործիքների, ֆինանսական պարտավորությունների առքուվաճառքի (օրինակ՝ արժեթղթերում կարճ

դիրքերի), ձեռնարկատիրական միավորման մեջ ձեռք բերողի կողմից ճանաչված պայմանական հատուցումների և այլ ֆինանսական պարտավորությունների նկատմամբ, որոնք նախորոշվել են որպես այդպիսին սկզբնական ճանաչման ժամանակ; և (ii) ֆինանսական երաշխիքի պայմանագրերի և վարկային պարտավորությունների:

Ֆինանսական պարտավորություններն ապաճանաչվում են, երբ դրանք մարված են (այսինքն, երբ պայմանագրում նշված պարտավորությունը կատարվել է, չեղյալ է հայտարարվել կամ դրա գործողության ժամկետը լրացել է):

Ֆինանսական ակտիվները և պարտավորությունները ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում հաշվանցվում են և ներկայացվում են զուտ արժեքով, եթե գոյություն ունի օրենսդրորեն հաստատված իրավունք իրականացնելու հաշվառված գումարների հաշվանցում, ինչպես նաև մտադրություն ներկայացնելու այն զտման սկզբունքով կամ միաժամանակ իրացնելու ակտիվը և մարելու պարտավորությունը: Այդպիսի հաշվանցման իրավունքը (ա) չպետք է պայմանական լինի ապագա իրադարձությունից և (բ) պետք է իրավաբանական ուժ ունենա բոլոր հետևյալ հանգամանքներում՝ (i) բնականոն գործունեության ընթացքում, (ii) դեֆոլտի դեպքում և (iii) անվճարունակության կամ սնանկության դեպքում:

3.9 Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Մնացորդները դրամարկղում և բանկերում ներառում են կանխիկ միջոցները, բանկային հաշիվների մնացորդները և դրամական միջոցները՝ ճանապարհին:

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվության նպատակով՝ դրամական միջոցների համարժեքները կարճաժամկետ, բարձր իրացվելի ներդրումներն են, որոնք հեշտ փոխարկվում են դրամական միջոցների՝ նախապես հայտնի գումարներով, և որոնց արժեքի փոփոխման ռիսկը նշանակալի չէ: Դրամական միջոցների համարժեքները պահվում են կարճաժամկետ դրամական պարտավորությունները բավարարելու նպատակով, այլ ոչ թե ներդրման կամ այլ նպատակներով: Հիմնադրամը դասակարգում է ներդրումները որպես դրամական միջոցների համարժեքներ այն դեպքում, եթե դրանք հեշտ փոխարկվում են դրամական միջոցների՝ նախապես հայտնի գումարներով, և որոնց արժեքի փոփոխման ռիսկը նշանակալի չէ:

3.10 Ժամկետային ավանդներ

Ժամկետային ավանդները ներառում են բանկերում պահվող ավանդները, որոնց մարման ժամկետները երեք ամսից ավելի են: Ժամկետային ավանդները հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

3.11 Զուտ ակտիվներ

Հիմնադրամի սեփական կապիտալը ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներկայացված է որպես զուտ ակտիվներ: Հիմնադրամի կանոնադրության համաձայն նրա զուտ ակտիվները չեն կարող բաշխվել հիմնադիրների միջև: Հիմնադրամի լուծարման դեպքում զուտ ակտիվները, եթե այդպիսիք մնում են կանոնադրությամբ նախատեսված գործունեության ծախսերից հետո, ենթական են բաշխման Հայաստանի Հանրապետությանը:

3.12 Եկամտին և ակտիվներին վերաբերող շնորհներ

Եկամտին վերաբերող շնորհը չի ճանաչվում, քանի դեռ չկա հիմնավորված երաշխիք, որ Հիմնադրամը կատարելու է դրան կից բոլոր պայմանները, և որ շնորհը ստացվելու է:

Շնորհները, որոնց հիմնական պայմանը Հիմնադրամի կողմից ոչ ընթացիկ ակտիվներ գնելը, կառուցելը կամ այլ կերպ ձեռք բերելն է, ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչվում են որպես ակտիվներին վերաբերող շնորհներ և սիստեմատիկորեն փոխանցվում

են տարվա արդյունք՝ համապատասխան ակտիվի օգտակար ծառայության ժամկետի ընթացքում:

Այլ շնորհները (Սահմանափակ միջոցներ) ճանաչվում են սիստեմատիկ հիմունքով եկամուտ այն ժամանակաշրջանում, որի ընթացքում դրանք փոխհատուցում են համապատասխան ծախսումները, որոնց համար դրանք ստացվել են: Շնորհը, որը հատկացվում է Հիմնադրամին՝ ի հատուցում արդեն կրած ծախսերի կամ վնասների, կամ որպես շտապ ֆինանսական օգնություն՝ առանց հետագա համապատասխան ծախսումների, ճանաչվում է որպես եկամուտ այն հաշվետու ժամանակաշրջանում, երբ դառնում է ստացման ենթակա:

Առանց պայմանի շնորհները (Անսահմանափակ միջոցներ) հասանելի են նվիրատվությունների ընդհանուր նպատակի համար, ինչպես սահմանված է կարգավորվող փաստաթղթերով: Եկամուտը ճանաչվում է գործունեության մասին հաշվետվությունում, երբ շնորհը դառնում է ստացման ենթակա:

3.13 Պահուստներ

Պահուստը ճանաչվում է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, երբ Հիմնադրամն ունի իրավական կամ կառուցողական պարտականություն՝ որպես անցյալ դեպքերի արդյունք, և եթե հավանական է, որ պարտականությունը մարելու նպատակով կպահանջվի տնտեսական օգուտների արտահոսք: Եթե դրա ազդեցությունը զգալի է, ապա պահուստը որոշվում է ապագա դրամական արտահոսքերի զեղչման միջոցով՝ օգտագործելով մինչև հարկումը տոկոսադրույքը, որն արտացոլում է դրամի ժամանակային արժեքի վերաբերյալ շուկայի ընթացիկ գնահատումները և, կիրառելիության դեպքում, պարտավորությանը վերագրվող յուրահատուկ ռիսկերը:

3.14 Շահութահարկ

Ընթացիկ շահութահարկը տարվա համար հարկվող շահույթից վճարվելիք հարկն է՝ հաշվետու ամսաթվին գործող կամ ըստ էության գործող հարկային դրույքաչափերով՝ հաշվի առնելով նախորդ տարիների համար վճարվելիք հարկերի ճշգրտումները:

Հիմնադրամը որոշ կանոններով և սահմանափակումներով ազատված է շահութահարկից՝ համաձայն «Դիլիջանի միջազգային դպրոցի» ծրագրի շրջանակներում հարկային և մաքսային արտոնություններ տրամադրելու մասին Հայաստանի Հանրապետության օրենքի (տե՛ս ծանոթագրություն 18): Շահութահարկից բացի այլ հարկերը գրանցվում են գործառնական ծախսերում:

Հետաձգված հարկը հաշվարկվում է ակտիվների ու պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և շահութահարկի հաշվարկման ժամանակ օգտագործվող համապատասխան հարկային բազաների միջև ժամանակավոր տարբերություններից: Հետաձգված հարկային պարտավորությունները ճանաչվում են բոլոր հարկվող ժամանակավոր տարբերությունների համար: Հետաձգված հարկային ակտիվները պետք է ճանաչվեն բոլոր նվազեցվող ժամանակավոր տարբերությունների համար այն չափով, որքանով որ հավանական է հարկվող արդյունքի ստացում, որի դիմաց կարող է օգտագործվել նվազեցվող ժամանակավոր տարբերությունը: Այսպիսի հետաձգված հարկային ակտիվներն ու պարտավորությունները չեն ճանաչվում, եթե ժամանակավոր տարբերությունն առաջանում է գուդվիլի սկզբնական ճանաչումից կամ այլ ակտիվների և պարտավորությունների սկզբնական ճանաչումից այնպիսի գործարքում, որը գործարքի պահին չի ազդում ո՛չ հաշվապահական արդյունքի, ո՛չ էլ հարկվող արդյունքի վրա (բացի ձեռնարկատիրական գործունեության միավորումներից):

Հետաձգված հարկային պարտավորությունները ճանաչվում են հարկվող ժամանակավոր տարբերությունների համար, որոնք կապված են օգտագործման իրավունքի ձևով ակտիվների հետ: Հետաձգված հարկային ակտիվներ, որոնք առաջանում են նվազեցվող

ժամանակավոր տարբերություններից, կապված են վարձակալության գծով պարտավորությունների հետ:

Հետաձգված հարկային ակտիվների հաշվեկշռային արժեքը վերանայվում է յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում և նվազեցվում է այն չափով, որով այլևս հավանական չէ, որ Հիմնադրամը կստանա բավարար հարկվող արդյունք, որը թույլ կտա հետաձգված հարկային ակտիվից օգուտն ամբողջությամբ կամ մասամբ իրացնել:

Հետաձգված հարկային ակտիվներն ու պարտավորությունները չափվում են հարկերի այն դրույքների օգտագործմամբ, որոնց կիրառման մեջ լինելն ակնկալվում է ակտիվի իրացման կամ պարտավորության մարման ժամանակ՝ հիմք ընդունելով հարկերի այն դրույքները (և հարկային հարաբերություններ կարգավորող նորմատիվ իրավական ակտերը), որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ժամանակաշրջանի վերջում: Հետաձգված հարկային պարտավորությունների և հետաձգված հարկային ակտիվների չափումն արտացոլում է հարկային հետևանքները, որոնք երևան են գալու կախված այն եղանակից, որով Հիմնադրամը հաշվետու ամսաթվի դրությամբ ակնկալում է փոխհատուցել կամ մարել իր ակտիվների կամ պարտավորությունների հաշվեկշռային արժեքները:

3.15 Հատուցումներ աշխատակիցներին

Կարճաժամկետ հատուցումներն աշխատակիցներին այն հատուցումներն են, որոնք ենթակա են մարման ամբողջությամբ տարեկան այն հաշվետու ժամանակաշրջանի ավարտից հետո տասներկու ամսվա ընթացքում, որում աշխատակիցները մատուցել են համապատասխան ծառայությունները: Դրանք ներառում են՝

(ա) աշխատավարձերը և պարգևավճարները,

(բ) վճարովի տարեկան արձակուրդները և անաշխատունակության հետ կապված վճարովի արձակուրդները,

Աշխատավարձերը, վճարովի տարեկան արձակուրդները և ժամանակավոր անաշխատունակության հետ կապված վճարովի արձակուրդները և հավելավճարները հաշվեգրվում են այն տարում, երբ համապատասխան ծառայությունները մատուցվում են Հիմնադրամի աշխատակիցների կողմից: Սահմանված վճարումներով կենսաթոշակային ծրագրերի մասով Հիմնադրամը չունի իրավական պարտավորություն:

3.16 Եկամուտ/հասույթ

Հաճախորդների հետ կնքված պայմանագրերը չեն պարունակում էական ֆինանսական բաղադրիչ: Հասույթը հիմնականում բաղկացած է քոլեջի ուսման վարձերից՝ կրթական ծառայությունների համար և կարճաժամկետ ամառային ծրագրի համար հանրակացարանի ենթավարձակալությունից:

Կրթական ծառայություններ - Հիմնադրամը տրամադրում է կրթական ծառայություններ ֆիքսված գնով (ուսման վարձ): Ուսման վարձն ուղղակիորեն վերաբերում է կոնկրետ ակադեմիական և ոչ ակադեմիական դասընթացների տրամադրմանը: Հասույթը ճանաչվում է այն հաշվետու ժամանակաշրջանում, երբ ծառայությունները մատուցվում են՝ համամասնական հիմունքներով դասընթացի ընթացքում: Ծնողների և Ազգային կոմիտեների կողմից կատարված վճարները ներկայացված են Գործունեության մասին հաշվետվությունում որպես հասույթ: Դոնորներից ստացված գումարները ներկայացված են որպես ստացված միջոցներ տողում:

Ուսանողները վճարում են ֆիքսված գումարն ըստ վճարման ժամանակացույցի: Եթե Հիմնադրամի մատուցած ծառայությունները գերազանցում են վճարումը, ապա ճանաչվում է պայմանագրային ակտիվ: Եթե վճարումները գերազանցում են մատուցված ծառայությունների ծավալը, ապա ճանաչվում է պայմանագրային պարտավորություն:

Տարեվերջի դրությամբ պայմանագրային ակտիվները դասակարգվում են որպես առևտրային դեբիտորական պարտքեր:

Պայմանագրային պարտավորությունները ճանաչվում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում՝ հետաձգված եկամուտ տողում (տե՛ս ծանոթագրություն 13):

Վարձակալական ծառայություններ - Հանրակացարանի ենթավարձակալությունից ստացված հասույթը ճանաչվում է վարձակալության ժամկետի ընթացքում գծային մեթոդով:

Սահմանափակ միջոցներ- Սահմանափակ միջոցները ստացվում են նվիրատվությունների որոշակի նպատակի համար (հիմնականում ուսման վարձի փոխհատուցում, ուսանողների կեցության ծախսեր և այլն) և հասանելի չեն ընդհանուր օգտագործման համար: Այն դեպքում, երբ սպասվելիք միջոցների նկատմամբ իրավունքը կախված է Հիմնադրամի վերահսկողության ներքո գտնվող պայմանների կատարումից, եկամուտը ճանաչվում է, երբ բավարար ապացույցներ կան, որ պայմանները կբավարարվեն: Եթե կա անորոշություն, թե արդյոք Հիմնադրամը կարող է բավարարել նման պայմանները, եկամուտը հետաձգվում է: Եկամուտը ճանաչվում է գործունեության մասին հաշվետվությունում և գրանցվում է սահմանափակ միջոցներ տողում: Ծախսերը ճանաչվում են Հիմնադրամի կողմից դրանց իրականացման պահին: Ուսանողների ուսման վարձի ֆինանսավորման համար ստացված սահմանափակ միջոցները ճանաչվում են որպես ընթացիկ ժամանակաշրջանի եկամուտ՝ հիմնվելով տվյալ ուսանողի (ում համար ստացվել է նվիրատվությունը) ընդհանուր ուսման ժամանակահատվածի նկատմամբ անցած ժամանակահատվածի հարաբերակցության վրա:

Անսահմանափակ միջոցներ- Անսահմանափակ միջոցները հասանելի են նվիրատվությունների ընդհանուր նպատակի համար, ինչպես սահմանված է հիմնադիր փաստաթղթերով: Եկամուտը ճանաչվում է գործունեության մասին հաշվետվությունում, երբ շնորհը դառնում է ստացման ենթակա: Անսահմանափակ միջոցները օգտագործվում են Հիմնադրամի կողմից ուսանողներին իր կողմից տրամադրված կրթաթոշակների գծով չվաստակած հասույթը լրացնելու նպատակով:

Ակտիվներին վերաբերող շնորհներ- Ակտիվներին վերաբերող շնորհը սահմանափակ պահուստ է, որը ներկայացնում է այն միջոցները, որոնք ներդրվել են հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերման մեջ՝ Հիմնադրամի սովորական գործունեության մեջ օգտագործելու համար: Եկամուտը սիստեմատիկորեն ճանաչվում է գործունեության մասին հաշվետվությունում ակտիվի օգտակար ծառայության ժամկետին զուգահեռ:

4 Հիմնական միջոցներ

Հազար դրամ	Տնտեսական և պարագաներ և սարքավորումներ	Տրանսպորտային միջոցներ	Անավարտ արտադրանք	Ընդամենը
Սկզբնական արժեք				
2022թ. հունվարի 1-ի դրությամբ	3,704,759	190,607	-	3,895,366
Ավելացում	70,122	-	8,202	78,324
Օտարում	(90,673)	-	-	(90,673)
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	3,684,208	190,607	8,202	3,883,017
Ավելացում	22,202	-	16,282	38,484
Օտարում	(365)	-	-	(365)
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	3,706,045	190,607	24,484	3,921,136
Կուտակված մաշվածություն				
2022թ. հունվարի 1-ի դրությամբ	3,578,774	149,613	-	3,728,387
Տարվա հաշվարկ	67,458	14,774		82,232
Օտարման հետևանքով դուրսգրում	(88,601)	-	-	(88,601)
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	3,557,631	164,387	-	3,722,018
Տարվա հաշվարկ	62,119	14,517	-	76,636
Օտարման հետևանքով դուրսգրում	(365)	-	-	(365)
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	3,619,385	178,904	-	3,798,289
Հաշվեկշռային արժեք				
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	126,577	26,220	8,202	160,999
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	86,660	11,703	24,484	122,847

5 Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ

Հազար դրամ	2023թ.	2022թ.
Մնացորդը տարվա սկզբում	1,487,733	1,279,261
Վարձակալության պայմանագրի փոփոխություն	138,792	378,825
Մաշվածության հաշվարկ	(216,191)	(170,353)
Մնացորդը տարվա վերջում	1,410,334	1,487,733

2023 և 2022թթ. վարձակալության գծով պայմանագրերը փոփոխվել են՝ բարձրացնելով վարձավճարը մինչև պայմանագրի գործողության ժամկետի ավարտը: Արդյունքում՝ օգտագործման իրավունքի ձևով ակտիվների և վարձակալության պարտավորությունների գումարները վերաչափվել են:

6 Հետաձգված հարկեր

Հազար դրամ	2023թ.	2022թ.
Տարեսկզբի մնացորդ	-	-
Կրեդիտագրված շահույթ կամ ծախս (տե՛ս ծանոթագրություն 18)	10,517	-
Տարեվերջի մնացորդ	10,517	-

2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա հետաձգված հարկերը խմբավորված են հետևյալ կերպ.

Հազար դրամ	1 հունվարի 2023թ.	Ճանաչված շահույթում կամ վնասում	31 դեկտեմբերի 2023թ.
Հետաձգված հարկային ակտիվներ			
Վարձակալության գծով պարտավորություններ	-	264,377	264,377
	-	264,377	264,377
Հետաձգված հարկային պարտավորություններ			
Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ	-	253,860	253,860
	-	253,860	253,860
Զուտ արդյունք - հետաձգված հարկային ակտիվներ	-	10,517	10,517

7 Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ֆինանսական ակտիվներ		
Դեբիտորական պարտքեր ուսանողներից և ազգային կոմիտեներից	9,032	16,852
Այլ դեբիտորական պարտքեր	12,480	5,401
Ակնկալվող պարտքային կորուստների համար պահուստ	(1,843)	(6,117)
	19,669	16,136
Ոչ ֆինանսական ակտիվներ		
Տրված կանխավճարներ	34,919	70,300
Այլ	3,389	3,538
	38,308	73,838
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	57,977	89,974

2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ առևտրային դեբիտորական պարտքերի համար կորուստների գծով պահուստի մնացորդը համադրվում է տարեսկզբի մնացորդի հետ հետևյալ կերպ.

Հազար դրամ

	2022թ.	2021թ.
Տարեսկզբի մնացորդ	6,117	93,151
Տարվա ընթացքում պահուստի ճանաչում	-	2,157
Տարվա ընթացքում չօգտագործված պահուստի հակադարձում	(4,274)	(89,191)
Տարեվերջի մնացորդ	1,843	6,117

Հիմնադրամը բոլոր առևտրային դեբիտորական պարտքերի համար կիրառում է ՖՀՄՍ 9-ի պարզեցված մոդելը. «գործողության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստների ճանաչում»: Ակնկալվող պարտքային կորուստները չափելիս առևտրային դեբիտորական պարտքերը խմբավորվել են՝ ելնելով պարտքային ռիսկի ընդհանուր բնորոշումներից և ժամկետանց օրերից:

Ակնկալվող կորուստների դրույքաչափերը հաշվարկվել են՝ հիմնվելով 2023թ. դեկտեմբերի 31-ին կամ 2022թ դեկտեմբերի 31-ին նախորդող 36 ամսվա ընթացքում վաճառքի դիմաց ստացված վճարումների պատկերի վրա, ինչպես նաև հաշվի առնելով այդ ժամանակամիջոցում ձևավորված պատմական պարտքային կորուստները: Այս կորուստների պատմական դրույքաչափերը ճշգրտվում են, որպեսզի արտացոլեն ընթացիկ և ապագային վերաբերող մակրոտնտեսական գործոնները, որոնք ազդեցություն ունեն հաճախորդի՝ չվճարված դեբիտորական պարտքերը մարելու կարողության վրա: Հիմնադրամը գնահատել է, որ ամենահամապատասխան գործոն են հանդիսանում Հայաստանի Հանրապետությունում գնաճի մակարդակը և ճշգրտում է կորուստների պատմական դրույքաչափերն այդ գործոններով պայմանավորված սպասվող փոփոխությունների չափով:

Ուսանողներից և ազգային կոմիտեներից ստացվելիք առևտրային դեբիտորական պարտքերի ակնկալվող պարտքային կորստի պահուստը որոշվում է ստորև բերված աղյուսակում ներկայացված պահուստի մատրիցայի համաձայն: Պահուստի մատրիցան հիմնված է ակտիվի ժամկետանց օրերի քանակի վրա՝ ճշգրտված ապագային վերաբերող տեղեկատվության վրա:

2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	Ակնկալվող պարտքային կորուստ	Համախառն հաշվեկշռային արժեք	Գործողության ամբողջ ժամանակա-հատվածի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստների ճանաչում
Մինչև 183 օր ժամկետանց	16.79%	5,720	961
184 օրից 365 օր ժամկետանց	5.63%	2,575	145
366 օրից մինչև 548 օր ժամկետանց	67.89%	-	-
548 օրից ավելի ժամկետանց	100.00%	737	737
		9,032	1,843

2023թ. հունվարի 1-ի դրությամբ	Ակնկալվող պարտքային կորուստ	Համախառն հաշվեկշռային արժեք	Գործողության ամբողջ ժամանակա-հատվածի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստների ճանաչում
Մինչև 183 օր ժամկետանց	33.78%	16,116	5,444
184 օրից 365 օր ժամկետանց	32.92%	-	-
366 օրից մինչև 548 օր ժամկետանց	67.69%	198	134
548 օրից ավելի ժամկետանց	100.00%	538	539
		16,852	6,117

21 (բ) ծանոթագրությունում ներկայացված են պարտքային ռիսկի և ակնկալվող պարտքային ռիսկի վերլուծության վերաբերյալ բացահայտումները: Արժեզրկման պահուստի ընթացիկ և համադրելի գումարները հաշվարկելիս կիրառվել է ՖՀՄՍ 9-ի՝ ակնկալվող կորուստների մոդելը:

Տե՛ս ծանոթագրություն 21 (ա)՝ առևտրային և այլ դեբիտորական պարտքերի արժույթների բացահայտման համար:

8 Հետաձգված ծախսեր

Հազար դրամ

	2023թ.	2022թ.
Տարեսկզբի մնացորդ	106,728	110,984
Ճանաչված ծախսեր	200,073	212,514
Մարված ծախսեր	(190,608)	(216,770)
Տարեվերջի մնացորդ	116,193	106,728

9 Ժամկետային ավանդներ

Բոլոր ժամկետային ավանդները կարճաժամկետ են և պահվում են «Ամերիաբանկ» ՓԲԸ-ում: Ժամկետային ավանդների մնացորդների պայմանագրային գործընկերոջ երկարաժամկետ ռիսկը, որը հիմնված է պարտքային ռիսկի դասակարգերի վրա, 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ գնահատվում է որպես BB- (2022թ.՝ B+)՝ համաձայն Standard & Poor's միջազգային վարկանիշային գործակալության: Ժամկետային ավանդների գծով ակնկալվող պարտքային կորուստներն էական չեն:

10 Մնացորդներ դրամարկղում և բանկերում

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Կանխիկ միջոցներ	114	461
Բանկային հաշիվներ	1,204,689	1,401,809
	1,204,803	1,402,270

Տե՛ս ծանոթագրություն 21 (ա)՝ դրամարկղում և բանկերում մնացորդների արժույթների բացահայտման համար:
Բանկային մնացորդները պահվում են «Ամերիաբանկ» ՓԲԸ-ում: Դրամական միջոցների և դրանց համարժեքների մնացորդների պայմանագրային գործընկերոջ երկարաժամկետ ռիսկը, որը հիմնված է պարտքային ռիսկի դասակարգերի վրա, 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ գնահատվում է որպես BB- (2022թ.՝ B+)՝ համաձայն Standard & Poor's միջազգային վարկանշային գործակալության: Կանխիկ միջոցների և բանկային հաշիվների գծով ակնկալվող պարտքային կորուստներն էական չեն:

11 Վարձակալություն

Ֆինանսական գործունեությունից առաջացած պարտավորությունները համադրվում են հետևյալ կերպ՝

	2023թ. հունվարի 1	Փոփոխություն	Վճարումներ	Ոչ դրամական շարժ Տոկոսային ծախս	2023թ. դեկտեմբերի 31
Վարձակալության գծով արտավորություններ	1,522,590	91,016	(331,759)	186,916	1,468,763
	1,522,590	91,016	(331,759)	186,916	1,468,763

	2022թ. հունվարի 1	Փոփոխություն	Վճարումներ	Ոչ դրամական շարժ Տոկոսային ծախս	2022թ. դեկտեմբերի 31
Վարձակալության գծով արտավորություններ	1,368,36	288,892	(265,601)	130,939	1,522,591
	1,368,36	288,892	(265,601)	130,939	1,522,591

Վարձակալական պարտավորությունները այնուհետև ներկայացվում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում հետևյալ կերպ.

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ընթացիկ	300,214	289,936
Ոչ ընթացիկ	1,168,547	1,232,652
	1,468,761	1,522,588

Հիմնադրամը վարձակալել է շինություններ և սարքավորումներ: Բացառությամբ կարճաժամկետ վարձակալությունների և փոքրարժեք ակտիվների վարձակալությունների՝ յուրաքանչյուր վարձակալություն արտացոլվել է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում որպես օգտագործման իրավունքի ձևով ակտիվ և վարձակալության գծով պարտավորություն:

Ընդհանուր առմամբ յուրաքանչյուր վարձակալություն պարունակում է սահմանափակում, ըստ որի օգտագործման իրավունքի ձևով ակտիվը կարող է օգտագործել միայն Հիմնադրամը, քանի դեռ առկա չէ ակտիվը այլ կողմի տրամադրելու պայմանագրային իրավունք: Վարձակալությունները կամ չեղյալ չհայտարարվող են, կամ կարող են չեղյալ հայտարարվել՝ միայն առաջացնելով նշանակալի դադարեցման վճար: Որոշ վարձակալություններ պարունակում են հիմքում ընկած ակտիվն անմիջապես վարձակալության ժամկետի ավարտին ձեռք բերելու կամ վարձակալության ժամկետը երկարացնելու հնարավորություն:

Վարձակալության գծով վճարներ, որոնք չեն ճանաչվում որպես պարտավություն

Հիմնադրամն ընտրել է կարճաժամկետ վարձակալությունների (12 ամիս կամ ավելի պակաս ակնկալվող ժամկետով) և փոքրարժեք ակտիվների վարձակալությունների հաշվառման համար չճանաչել վարձակալության գծով պարտավորություն: Նման վարձակալությունների համար կատարված վճարները ծախսագրվում են գծային հիմունքով: Ի լրումն, թույլատրելի չէ որոշակի փոփոխուն վարձավճարներ ճանաչել որպես վարձակալության գծով պարտավորություն, դրանք ծախսագրվում են իրականացման պահին:

12 Ստացված միջոցներ

Հազար դրամ	Ակտիվներին վերաբերող շնորհներ	Սահմանա-փակ միջոցներ	Անսահմանա-փակ միջոցներ	Ընդամենը
Մնացորդը 2022թ. հունվարի 1-ի դրությամբ	54,388	200,746	-	255,134
Ստացված միջոցներ				
Ստացված դրամական նվիրատվություններ	-	753,511	330,279	1,083,790
Ստացված ոչ դրամական նվիրատվություններ	25,273	-	-	25,273
Այլ	-	-	3,408	3,408
	25,273	753,511	333,687	1,112,471
Ծախսված միջոցներ				
Ուսման վարձի ֆինանսավորում	-	(690,967)	(333,563)	(1,024,530)
Այլ	-	-	(124)	(124)
Մաշվածությանը և ամորտիզացիա	(25,264)	-	-	(25,264)
	(25,264)	(690,967)	(333,687)	(1,049,918)
Մնացորդը 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	54,397	263,290	-	317,687
Ստացված միջոցներ				
Ստացված դրամական նվիրատվություններ	-	582,963	210,191	793,154
Ստացված ոչ դրամական նվիրատվություններ	2,320	-	-	2,320
Այլ	-	-	122	122
	2,320	582,963	210,313	795,596
Ծախսված միջոցներ				
Ուսման վարձի ֆինանսավորում	-	(588,579)	(210,193)	(798,772)
Այլ	-	(844)	(120)	(964)
Մաշվածությանը և ամորտիզացիա	(27,314)	-	-	(27,314)
	(27,314)	(589,423)	(210,313)	(827,050)
Մնացորդը 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	29,403	256,830	-	286,233

«Անսահմանափակ միջոցների» գծով ուսման վարձի ֆինանսավորումը ներառում է հաշվետու ժամանակաշրջանում դեբիտորական պարտք ճանաչված անսահմանափակ միջոցները: Այն փաստը, որ Հիմնադրամի եկամուտները ճանաչվում են դրամով՝ պայմանագրով նախատեսված ֆիքսված գումարի համար (տե՛ս ծանոթագրություն 3.16), մինչդեռ ծառայությունների գծով կանխիկ գումարը ստացվում է ԱՄՆ դոլարով, առաջացնում է տարբերություն, որը ճանաչվում է սույն աղյուսակի «Այլ» հոդվածում:

13 Հետաձգված եկամուտ

Հազար դրամ	2023թ.	2022թ.
Տարեսկզբի մնացորդ	672,961	750,311
Ծնողներից և ազգային կոմիտեներից ստացված վճարումներ	1,659,560	1,633,675
Նվիրատվությունների վերադասակարգում	(7,855)	(5,358)
Արտարժույթի փոխարկման ազդեցությունը	7,036	(1,539)
Տարվա ընթացքում եկամտագրված գումարներ	(1,612,554)	(1,704,128)
Տարեվերջի մնացորդ	719,148	672,961

Հաճախորդների հետ կնքված երկարաժամկետ պայմանագրերի գծով չբավարարված պարտավորություններ

Ստորև բերված աղյուսակը ներկայացնում է ուսանողների և/կամ նրանց ծնողների հետ կնքված երկարաժամկետ պայմանագրերի գծով չբավարարված պարտավորությունների մասին տեղեկատվություն:

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31	2022թ. դեկտեմբերի 31
Գործարքի գնի համախառն գումարը, որը վերագրվում է մասնակիորեն չբավարարված երկարաժամկետ պայմանագրերին	2,072,045	1,973,069

Ղեկավարությունն ակնկալում է, որ 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ պայմանագրերի չբավարարված մասին վերագրված գործարքի գնի 80%-ը (1,661,011 հազար դրամ) կճանաչվի որպես հասույթ հաջորդ հաշվետու ժամանակաշրջանում: Մնացած 20%-ը (411,034 հազար դրամ) կճանաչվի 2025թ. ֆինանսական տարում: Մնացած բոլոր պայմանագրերը կնքվում են ոչ ավել քան մեկ տարի ժամկետով կամ ճանաչվում են օգտագործված ժամանակի ընթացքում:

14 Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Առևտրային կրեդիտորական պարտքեր	66,877	85,773
Վճարվելիք գումարներ աշխատակիցներին	88,782	80,097
Ուսանողներից ստացված կանխավճարներ	25,042	23,061
Այլ	15,369	13,786
	196,070	202,717

Հիմնադրամն ունի ֆինանսական ռիսկի կառավարման քաղաքականություններ, որոնք ապահովում են բոլոր պարտավորությունների ժամանակին կատարում:

Հիմնադրամի արտարժութային ռիսկի մասին ավելի մանրամասն տեղեկատվություն ներկայացված է ծանոթագրություն 21 (ա)-ում:

15 Հասույթ

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2022թ. դեկտեմբերի 31-ին1 ավարտված տարի
Կրթական ծառայություններ	1,892,462	1,862,626
Ամառային ճամբար	183,627	123,360
Խմբակային դասընթացներ	50,623	16,244
Այլ ծառայություններ	9,192	7,488
Բրենդային նյութերի վաճառք	2,333	3,472
	2,138,237	2,013,190

Ուսանողների ուսման վճարներից ճանաչված հասույթը կազմում է 1,892,462 հազար դրամ (2022թ.՝ 1,862,626 հազար դրամ), որը ներառում է ծնողներից ստացված գումարները՝ 1,532,148 հազար դրամ (2022թ.՝ 1,477,392 հազար դրամ) և Ազգային կոմիտեներից ստացվելիք գումարները՝ 360,314 հազար դրամ (2022թ.՝ 415,234 հազար դրամ):

Հասույթի ճանաչման ժամկետները (հասույթի յուրաքանչյուր աղբյուրի համար) ներկայացված են ստորև.

Հազար դրամ	2023թ.	2022թ.
Ժամանակի որոշակի պահին	2,333	3,472
ժամանակի ընթացքում	2,135,904	2,009,718

16 Գործառնական ծախսեր

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Անձնակազմի հետ կապված ծախսեր	1,295,449	1,327,487
Անձնակազմի և ուսանողների սննդի ծախսեր	222,543	202,685
Վերանորոգման և պահպանման ծախսեր	203,405	185,318
Անդամավճարներ մասնագիտական կազմակերպություններին	139,234	150,121
Հիմնական միջոցների մաշվածություն	76,636	82,232
Օգտագործման իրավունքի ձևով ակտիվների մաշվածություն	216,191	170,353
Ակնկալվող պարտքային կորուստների գծով արժեզրկում	4,779	13,696
Կոմունալ ծախսեր	140,058	141,805
Մասնագիտական ծախսեր	80,089	74,738
Տեղափոխման ծախսեր	34,954	34,269
Բանկային և ապահովագրական ծախսեր	31,602	73,160
Գովազդային և շուկայավարման ծախսեր	16,865	10,046
Գործառնական վարձակալության ծախսեր	17,944	18,585
Տրանսպորտային ծախսեր	10,600	13,458
Վերապատրաստման ծախսեր	11,451	17,893
Հեռահաղորդակցության ծախսեր	865	10,249
Ճանապարհորդության և ներկայացուցչական ծախսեր	54,401	65,633
Օգտագործված պաշարների սկզբնական արժեք	55,738	58,032
Ոչ նյութական ակտիվների ամորտիզացիա	3,647	3,221
Այլ ծախսեր	403,440	246,824
	3,019,891	2,899,805

Գործառնական ծախսերը ներառում են “Samsung” նորարարական կենտրոնի, "Just Dilijan It" ամառային ճամբարի և խմբակային դասընթացների գծով ծախսերը, որոնք բաշխվել են հետևյալ կերպ.

- *“Samsung” նորարարական կենտրոն՝*

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Անձնակազմի հետ կապված ծախսեր	27,280	26,662
Անձնակազմի և ուսանողների սննդի ծախսեր	3,772	1,216
Ծրագրային նյութեր	1,435	10,552
Տրանսպորտային ծախսեր	3,823	2,083
Բջջային կապի ծախսեր	47	53
Ապահովագրության ծախսեր	117	112
Այլ ծախսեր	12,683	621
Ապահովագրության ծախսեր	49,157	41,299

- Խմբակային դասընթացներ՝

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Անձնակազմի ծախսեր	74,475	41,301
Անձնակազմի և ուսանողների սննդի ծախսեր	11,021	5,276
Ծրագրային նյութեր	1,921	1,533
Բջջային կապի ծախսեր	236	226
Ապահովագրության ծախսեր	868	546
Այլ ծախսեր	4,212	2,594
	92,733	51,476

- "Just Dilijan It" ամառային ճամբար՝

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Անձնակազմի ծախսեր (ներառյալ հրահանգիչներ և օգնականներ)	63,206	50,632
ՄՀՔԴ բաշխված ծախսեր, ներառյալ՝		*33,283*
Վարձակալության ծախսեր	*26,757*	*17,500*
Մաքրման ծախսեր	*12,898*	*10,038*
Անվտանգության ծախսեր	*5,482*	*3,937*
Պահպանման ծախսեր	-	*1,808*
Անձնակազմի և ուսանողների սննդի ծախսեր	18,990	10,319
Կոմունալ ծախսեր	9,878	8,124
Խորհրդատվական ծախսեր	-	2,034
Ծրագրային նյութեր	7,853	1,735
Մաքրման ծախսեր	2,837	-
COVID-ի հետ կապված ծախսեր	-	20
Տրանսպորտային ծախսեր	6,273	1,318
Տեսարժան վայրեր այցելության ծախսեր	2,410	3,385
Բջջային կապի ծախսեր	142	82
Ապահովագրության ծախսեր	117	134
Այլ ծախսեր	6,515	6,116
	163,358	117,182

Հիմնադրամի ուսման վարձի պայմանագրերը կնքված են հայկական դրամով՝ պայմանագրային փոխարժեքով կապված լինելով ԱՄՆ դոլարի հետ: Հասույթը գոյանում է հայկական դրամով, բայց վճարումները ստացվում են ԱՄՆ դոլարով, արդյունքում արտարժույթի փոխարժեքային տատանումների հետևանքով Հիմնադրամը հաշվետու տարվա ընթացքում ունեցել է 342,066 հազար դրամի (2022 թ.՝ 187,853 հազար դրամ) ծախսեր, որը ներառված է սույնծանոթագրության «այլ ծախսեր» հոդվածի ներքո:

17 Ֆինանսական եկամուտ և ծախսեր

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Վարձակալության գծով տոկոսային ծախսեր	186,916	130,939
Ընդհանուր ֆինանսական ծախսեր	186,916	130,939
Վարձակալական պայմանների փոփոխությունից եկամուտ	67,999	89,933
Տոկոսային եկամուտ	29,137	25,606
Ընդհանուր ֆինանսական եկամուտ	97,136	115,539
Զուտ ֆինանսական եկամուտ/(ծախսեր)	89,780	15,400

18 Շահութահարկի գծով ծախս/ (փոխհատուցում)

Հիմնադրամը որոշ կանոններով և սահմանափակումներով պայմանավորված, ազատված է շահութահարկից՝ համաձայն «Դիլիջանի միջազգային դպրոցի» ծրագրի շրջանակներում հարկային և մաքսային արտոնություններ տրամադրելու մասին Հայաստանի Հանրապետության օրենքի: Հիմնադրամը պետք է շահութահարկ վճարի, եթե նախորդ տարվա շահույթը չի վերաներդրվում մինչև հաջորդ տարվա ապրիլի 15-ը:

Ավելի ուշ, 2021թ. ընդունվել է «Դիլիջանի միջազգային դպրոցի» մասին փոփոխված օրենքը՝ հարկերից ազատման փոփոխված դրույթներով, որոնք այլևս չեն պահանջում շահույթի վերաներդնում: Այս դրույթներն ուժի մեջ են մտնում 2020թ. հունվարի 1-ից սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար:

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2022թ. դեկտեմբերի 31-ին1 ավարտված տարի
Ընթացիկ հարկ	4,584	2,563
Հետաձգված հարց (տե՛ս ծանոգարություն 6)	(10,517)	-
	(5,933)	2,563

Արդյունավետ հարկային դրույքաչափի համադրումը ներկայացված է ստորև.

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	Արդյունավետ հարկային դրույքաչափ (%)	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	Արդյունավետ հարկային դրույքաչափ (%)
Շահույթ մինչև հարկումը (համաձայն ՖՀՄՍ-ների)	(87,460)		(67,910)	
Շահութահարկ՝ 18% դրույքաչափով (2022թ.՝ 18%)	(15,743)	18.0	(12,224)	18.0
Չհարկվող եկամուտ, զուտ	9,810	(11.2)	14,787	(21.8)
Շահութահարկի գծով ծախս	(5,933)	6.8	2,563	(3.8)

19 Կարևոր հաշվապահական գնահատումներ և դատողություններ

Ենթադրությունները և դատողությունները շարունակաբար գնահատվում են և հիմնված են պատմական փորձի, ինչպես նաև այլ ցուցանիշների վրա, ներառյալ ապագա ակնկալվող իրադարձությունները, որոնք տվյալ հանգամանքներում համարվում են ընդունելի:

19.1 Կարևոր հաշվապահական գնահատումներ

Հիմնադրամն իրականացնում է ապագային վերաբերող գնահատումներ և ենթադրություններ: Այդ հաշվապահական գնահատականները կարող են չհամապատասխանել իրական արդյունքներին: Ստորև ներկայացված են այն գնահատումներն ու ենթադրությունները, որոնց գծով առկա է ռիսկ, որ հաջորդ ֆինանսական տարում ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքները կենթարկվեն էական ճշգրտումների:

Կապակցված կողմերի գործարքների սկզբնական ճանաչում

Իր գործունեության բնականոն ընթացքում Հիմնադրամը գործարքներ է իրականացնում կապակցված կողմերի հետ: ՖՀՄՍ 9-ը պահանջում է ֆինանսական գործիքների սկզբնական ճանաչում՝ դրանց իրական արժեքով: Դատողություն է կիրառվում որոշելու համար, թե արդյոք գործարքները գնահատվում են շուկայական կամ ոչ շուկայական տոկոսադրույքներով, երբ այդպիսի գործարքների համար առկա չէ գործող շուկա: Դատողության հիմքում ընկած է ոչ կապակցված կողմերի հետ նմանատիպ գործարքների գնագոյացումը և արդյունավետ տոկոսադրույքների վերլուծությունը: Կապակցված կողմերի մնացորդների պայմաններն ու դրույթները բացահայտված են ծանոթագրություն 24-ում:

Հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետներ

Ակտիվի օգտակար ծառայության գնահատումը դատողության առարկա է՝ հիմնված համանման ակտիվների վերաբերյալ փորձի վրա: Ակտիվներում մարմնավորված ապագա տնտեսական օգուտները սպառվում են հիմնականում օգտագործման միջոցով. ինչպիսիք են՝տեխնիկական կամ առևտրային հնացվածությունը և մաշվածությունը, հաճախ հանգեցնում են ակտիվների մեջ մարմնավորված տնտեսական օգուտների նվազեցմանը: Ղեկավարությունը գնահատում է մնացած օգտակար ծառայության ժամկետները՝ համաձայն ակտիվների ընթացիկ տեխնիկական պայմանների և գնահատված ժամանակաշրջանի, որի

ընթացքում ակնկալվում է, որ ակտիվները օգուտներ կբերեն Հիմնադրամի համար: Հաշվի են առնվում հետևյալ հիմնական գործոնները. ա) ակտիվների ակնկալվող օգտագործումը. բ) պարապուրդի ընթացքում ֆիզիկապես մաշվելը, որը կախված է գործառնական գործոններից և պահպանման ծրագրից և (գ) շուկայական պայմանների փոփոխություններից բխող տեխնիկական կամ առևտրային հնացվածությունը:

Երկարաձգման և դադարեցման տարբերակներ

Երկարաձգման և դադարեցման տարբերակները ներառված են Հիմնադրամի գույքի վարձակալության գծով մի շարք պայմանագրերի մեջ: Դրանք օգտագործվում են առավելագույնի հասցնելու գործառնական ճկունությունը Հիմնադրամի գործունեության մեջ օգտագործվող ակտիվների կառավարման համար: Երկարաձգման և դադարեցման տարբերակների մեծամասնությունը կարող է իրականացվել միայն Հիմնադրամի, այլ ոչ թե համապատասխան վարձատուի կողմից:

Վարձակալության ժամկետը որոշելիս ղեկավարությունը հաշվի է առնում բոլոր փաստերն ու հանգամանքները, որոնք տնտեսական խթան են ստեղծում երկարաձգման տարբերակը կիրառելու կամ դադարեցման տարբերակը չկիրառելու համար:

Ոչ ֆինանսական ակտիվների արժեզրկման վերլուծություն

Հիմնական միջոցները, ոչ նյութական ակտիվները և օգտագործման իրավունքի ձևով ակտիվները յուրաքանչյուր տարի ենթարկվում են արժեզրկման ստուգման: Մաշվող ակտիվներն արժեզրկման համար վերանայվում են, երբ իրադարձությունները և հանգամանքների փոփոխությունները վկայում են այն մասին, որ դրանց հաշվեկշռային արժեքը կարող է չվերականգնվել: Արժեզրկման կորուստը ճանաչվում է այն գումարով, որով ակտիվի հաշվեկշռային արժեքը գերազանցում է փոխհատուցվող գումարը: Արժեզրկումը գնահատելու նպատակով ակտիվները դասակարգվում են ամենացածր մակարդակներով, որոնց համար հիմնականում առկա են անկախ դրամական միջոցների ներհոսքեր (դրամաստեղծ միավորներ): 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ իրականացված վերլուծության հիման վրա ոչ ընթացիկ ոչ ֆինանսական ակտիվների գծով արժեզրկման հայտանիշներ չեն հայտնաբերվել:

19.2 Հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման ընթացքում կատարված կարևոր դատողություններ

Ստորև ներկայացված են ղեկավարության՝ հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման ընթացքում կատարված դատողությունները, որոնք ամենաէական ազդեցությունն ունեն ֆինանսական հաշվետվությունների վրա:

Կատարման պարտականության ամբողջական բավարարմանն ուղղված առաջընթացի չափում

Հիմնադրամը ծառայություններ է տրամադրում պայմանագրով ֆիքսված արժեքներով: Եթե Հիմնադրամը ժամանակի ընթացքում փոխանցում է ծառայության վերահսկողությունը և, հետևաբար, ժամանակի ընթացքում բավարարում է կատարման պարտականությունը, ապա ծառայություններ մատուցելուց ստացված հասույթը ճանաչվում է այն հաշվետու ժամանակաշրջանում, որում ծառայությունները մատուցվել են: Ֆիքսված գնով պայմանագրերի դեպքում հասույթը ճանաչվում է հաշվետու ժամանակաշրջանի վերջում մատուցված փաստացի ծառայության հիման վրա՝ համամասնորեն 274 օրվա ընթացքում, քանի որ հաճախորդը միաժամանակ ստանում և օգտագործում է օգուտները:

Հետաձգված հարկային ակտիվների ճանաչում

Այն չափը, որով կարող է ճանաչվել հետաձգված հարկային ակտիվ, կախված է այն հավանականության գնահատումից, թե արդյոք ապագայում հասանելի կլինի եկամուտ, որի դիմաց կիրացվեն նվազեցման ենթակա ժամանակավոր տարբերությունները և նախորդ

ժամանակաշրջաններից բերված հարկային վնասը: Ի լրումն, անհրաժեշտ է էական դատողություն հարկային միջավայրում իրավական և տնտեսական սահմանափակումների և անորոշությունների գնահատման ժամանակ:

20 Ֆինանսական գործիքներ

20.1 Հաշվապահական հաշվառման քաղաքականություններ

Ֆինանսական ակտիվի և ֆինանսական պարտավորության յուրաքանչյուր դասի համար կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը և ընդունված մեթոդների մանրամասները, ինչպես նաև եկամտի և ծախսերի ճանաչման չափանիշներն ու հիմքերը ներկայացված են ծանոթագրություն 3.8-ում:

20.2 Ֆինանսական գործիքների կատեգորիաները

Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքները ըստ կատեգորիաների ներկայացված են ստորև.

Ֆինանսական ակտիվներ

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ		
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	19,669	16,136
Ժամկետային ավանդներ	419,851	214,193
Մնացորդներ դրամարկղում և բանկերում	1,204,803	1,402,270
Ընդամենը ֆինանսական ակտիվներ	1,644,323	1,632,599

Ֆինանսական պարտավորություններ

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ամորտիզացված արժեքով պահվող ֆինանսական պարտավորություններ՝		
Վարձակալության գծով պարտավորություն	1,468,761	1,544,053
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	155,659	166,864
Ընդամենը ֆինանսական պարտավորություններ	1,624,420	1,710,917

21 Ֆինանսական ռիսկի կառավարման ուղղություններ

Հիմնադրամի ռիսկերի կառավարման գործառույթն իրականացվում է ֆինանսական, գործառնական և իրավական ռիսկերի առնչությամբ: Ֆինանսական ռիսկը ներառում է շուկայական, պարտքային ռիսկը և իրացվելիության ռիսկը: Ֆինանսական ռիսկի կառավարման գործառույթի առաջնային նպատակներն են սահմանել ռիսկերի սահմանաչափեր, այնուհետև ապահովել, որ ռիսկերի ենթարկվածությունը մնա այդ սահմաններում: Գործառնական և իրավական ռիսկերի կառավարման գործառույթները նպատակ ունեն ապահովելու ներքին քաղաքականության և ընթացակարգերի պատշաճ գործունեությունը՝ գործառնական և իրավական ռիսկերը նվազեցման նպատակով:

Ֆինանսական ռիսկի գործոններ

ա) Շուկայական ռիսկ

Ֆինանսական գործիքների օգտագործման ընթացքում Հիմնադրամը ենթարկվում է շուկայական ռիսկի, հատկապես՝ արտարժութային ռիսկի և տոկոսադրույքային ռիսկի, որոնք բխում են ինչպես գործառնական, այնպես էլ ներդրումային գործունեությունից:

Արտարժութային ռիսկ

Հիմնադրամը գործարքներ է իրականացնում արտարժույթով և, հետևաբար, ենթարկվում է արտարժույթի փոխարժեքային տատանումների ազդեցությանը: Արտարժութային ռիսկի նկատմամբ ղեկավարությունը սահմանում է արտարժույթների և ընդհանուր առմամբ ենթարկվածության մակարդակի սահմանաչափեր: Արդյունքները վերահսկվում են ամեն ամիս:

Արտարժույթով արտահայտված ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները, որոնք Հիմնադրամին ենթարկում են արտարժութային ռիսկի, նկարագրված են ստորև: Արտացոլված գումարներն իրենցից ներկայացնում են հիմնական ղեկավար անձնակազմին տրամադրված տվյալները, որոնք արտահայտված են հայկական դրամով՝ հաշվետու ժամանակաշրջանի վերջի ամսաթվի փոխարժեքով.

Հոդված

2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	ԱՄՆ դոլար	Ֆունտ ստերլինգ	Այլ
Ֆինանսական ակտիվներ			
Ժամկետային ավանդներ	18,524	-	-
Մնացորդներ դրամարկղում և բանկերում	995,660	46,769	25,910
	1,014,184	46,769	25,910
Ֆինանսական պարտավորություններ			
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	35,276	705	168
	35,276	705	168
Զուտ արդյունք	978,908	46,064	25,742

Հոդված

2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	ԱՄՆ դոլար	Ֆունտ ստերլինգ	Այլ
Ֆինանսական ակտիվներ			
Ներդրումներ պարտքային արժեթղթերում			
Ժամկետային ավանդներ	214,193	-	-
Մնացորդներ դրամարկղում և բանկերում	1,547,535	58,359	828
	1,761,728	58,359	828
Ֆինանսական պարտավորություններ			
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	29,887	671	2,100
	29,887	671	2,100
Զուտ արդյունք	1,731,841	57,688	(1,272)

Ստորև բերված աղյուսակում ներկայացված է Հիմնադրամի զգայունությունը՝ ԱՄՆ դոլարի նկատմամբ դրամի 10% (2022թ.՝ 10%) աճին/նվազմանը: 10%-ը (2022թ.՝ 10%) ղեկավարության կողմից գնահատված փոխարժեքի հավանական փոփոխությունն է: Զգայունության վերլուծությունը ներառում է միայն արտարժույթով արտահայտված դրամային հոդվածների մնացորդները և ժամանակաշրջանի վերջում ճշգրտում է դրանց փոխարկումը՝ փոփոխելով փոխարժեքը 10%-ով (2022թ.՝ 10%):

Դրամի արժևորումը ԱՄՆ դոլարի և բրիտանական ֆունտ ստերլինգի նկատմամբ 10%-ով (2022թ.՝ 10%) կունենա հետևյալ ազդեցությունը:

Հազար դրամ	ԱՄՆ դոլարի ազդեցություն		Ֆունտ ստերլինգի ազդեցություն	
	2023թ.	2022թ.	2023թ.	2022թ.
Տարվա արդյունք	97,891	173,184	4,604	58
	97,891	173,184	4,606	58

Արտարժույթի փոխարժեքի տատանման ազդեցությունը տարվա ընթացքում փոփոխվում է՝ կախված արտերկրյա գործարքների ծավալից: Այդուհանդերձ, վերը ներկայացված վերլուծությունը կարելի է համարել Հիմնադրամի՝ արտարժութային ռիսկին ենթարկվածության արտացոլումը:

Տոկոսադրույքային ռիսկ

Հիմնադրամը ենթարկվում է տոկոսադրույքային ռիսկի, քանի որ ունի հաստատուն և լողացող տոկոսադրույքներով փոխառու միջոցներ: Հիմնադրամը չունի տոկոսադրույքի ռիսկերի կառավարման պաշտոնական քաղաքականություն և ընթացակարգեր, քանի որ ղեկավարությունը համարում է, որ այդ ռիսկը աննշան է Հիմնադրամի գործունեության համար:

Բոլոր ֆինանսական ակտիվները, որոնք ենթարկվում են տոկոսադրույքային ռիսկի, կարճաժամկետ են:

Ստորև ներկայացված զգայունության վերլուծությունն իրականացվել է տոկոսադրույքի 1%-ի փոփոխության համար: 1%-ը ղեկավարության կողմից գնահատված տոկոսադրույքի հավանական փոփոխությունն է:

Եթե տոկոսադրույքը լիներ 1% բարձր/ցածր, իսկ մյուս փոփոխականները մնային հաստատուն, ապա Հիմնադրամի՝

- 2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա արդյունքը կաճեր/ կնվազեր 9,712 հազար դրամով (2022թ.՝ կաճեր/ կնվազեր 8,535 հազար դրամով),

բ) Պարտքային ռիսկ

Պարտքային ռիսկն առաջանում է այն դեպքում, երբ պայմանագրային գործընկերը չի կատարում իր պարտավորությունները, որի հետևանքով Հիմնադրամը կարող է ֆինանսական կորուստներ կրել: Հիմնադրամի պարտքային ռիսկն առաջանում է ֆինանսական ակտիվներից՝ ներառյալ բանկերում պահվող դրամական միջոցները և դրանց համարժեքները և առևտրային և այլ դեբիտորական պարտքերը:

Պարտքային ռիսկը կառավարվում է խմբային հիմունքով՝ ելնելով Հիմնադրամի պարտքային ռիսկի կառավարման քաղաքականությունից և ընթացակարգերից:

Բանկերում պահվող դրամական միջոցների մնացորդների և ավանդների մասով պարտքային ռիսկը կառավարվում է մնացորդները տարբեր բանկերում և բարձր վարկանիշ ունեցող ֆինանսական հաստատություններում պահելու միջոցով:

Առևտրային դեբիտորական պարտքերը ներառում են պայմանագրային գործընկերներ: Առևտրային դեբիտորական պարտքերի համար Հիմնադրամը գրավ չի վերցնում: Բացի այդ

Հիմնադրամը գրավ չի պահանջում նաև այլ ֆինանսական ակտիվների համար: Ակնկալվող պարտքային կորստի գծով վերլուծությունը ներկայացված է ծանոթագրություն 7-ում:

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	19,669	16,136
Ժամկետային ավանդներ	419,851	214,193
Մնացորդներ բանկում	1,204,689	1,401,809
Ընդամենը ֆինանսական ակտիվներ	1,644,209	1,632,138

գ) Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկն այն ռիսկն է, որ Հիմնադրամն ի վիճակի չի լինի մարել իր պարտավորվածությունները:

Հիմնադրամը վարում է իրացվելիության կառավարման քաղաքականություն՝ դրամարկղում և բանկային հաշիվներում պահելով բավարար միջոցներ, ինչպես նաև պահելով բարձր իրացվելիություն ունեցող ակտիվներ՝ գործառնական պարտավորությունները ժամանակին մարելու նպատակով:

Հետևյալ աղյուսակում ներկայացված է Հիմնադրամի ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորությունների գծով պայմանագրային մնացյալ մարման ժամկետները: Աղյուսակը պատրաստված է ֆինանսական պարտավորությունների չզեղչված դրամական միջոցների հոսքերի հիման վրա՝ հաշվի առնելով ամենավաղ ամսաթիվը, երբ Հիմնադրամը ստիպված կլիներ մարել այդ պարտավորությունները: Աղյուսակը ներառում է տոկոսների և մայր գումարի գծով դրամական միջոցների հոսքերը:

2023թ.	Անտոկոս	Պարտավորություն ֆինանսական վարձակալության գծով	Ընդամենը
Մինչև 6 ամիս	90,650	165,488	256,138
6 ամսից մինչև 1 տարի	19,503	159,265	178,768
Ավելի քան 1 տարի	45,506	1,804,998	1,850,504
	155,659	2,129,751	2,285,410

2022թ.	Անտոկոս	Պարտավորություն ֆինանսական վարձակալության գծով	Ընդամենը
Մինչև 6 ամիս	107,434	174,652	282,086
6 ամսից մինչև 1 տարի	17,829	153,187	171,016
Ավելի քան 1 տարի	41,601	2,042,488	2,084,089
	166,864	2,370,327	2,537,191

Հիմնադրամն իրացվելիության ռիսկի գնահատման և կառավարման ժամանակ հաշվի է առնում ֆինանսական ակտիվներից ակնկալվող դրամային հոսքերը, մասնավորապես՝ դրամական միջոցները և առևտրային դեբիտորական պարտքերը: Հիմնադրամի դրամական միջոցները և առևտրային դեբիտորական պարտքերը գերազանցում են անհրաժեշտ

դրամական արտահոսքերը: Առևտրային և այլ դեբիտորական պարտքերից դրամական հոսքերը պայմանագրով ենթակա են ստացման 12 ամսվա ընթացքում:

22 Պարտավորվածություններ

22.1 Իրավական պարտավորվածություններ

Ժամանակ առ ժամանակ և բնականոն գործունեության ընթացքում Հիմնադրամի դեմ դատական հայցեր կարող են հարուցվել: Այնուամենայնիվ իր սեփական գնահատումների հիման վրա ղեկավարությունն այն կարծիքին է, որ հայցերի գծով էական վնասներ չեն առաջանա:

23 Պայմանականություններ

23.1 Հարկեր

Հայաստանի Հանրապետության հարկային օրենսդրությունը, որն ուժի մեջ է մտել հաշվետու ժամանակաշրջանի վերջում, Հիմնադրամի գործարքների և գործունեության համար կիրառելիս ենթակա է տարբեր մեկնաբանությունների: Հետևաբար, ղեկավարության կողմից ընդունված հարկային մեկնաբանությունները և հարկային մեկնաբանությունները հաստատող պաշտոնական փաստաթղթերը կարող են հակասել (վիճարկելի լինել) հարկային մարմինների մեկնաբանություններին: Հայաստանի հարկային վարչարարությունն աստիճանաբար ամրապնդվում է, նաև ներառյալ այն փաստը, որ կա առանց հստակ բիզնես նպատակի կամ հարկային մարմինների տեսանկյունից անբարեխիղճ գործընկերներով պայմանավորված հարկային գործարքների վերանայման ավելի մեծ ռիսկ: Պաշտոնատար անձանց կողմից հարկային վերանայման ժամանակաշրջանները բաց են վերանայման մասին որոշման ընդունման պահին նախորդող երեք օրացուցային տարիների համար: Որոշակի հանգամանքներում վերանայումները կարող են ներառել ավելի երկար ժամանակաշրջաններ:

Քանի որ Հայաստանի Հանրապետության հարկային օրենսդրությունը որոշակի ոլորտներում հստակ ուղեցույց չի տրամադրում, Հիմնադրամը ժամանակ առ ժամանակ ընդունում է այսպիսի անորոշ ոլորտների վերաբերյալ մեկնաբանություններ, որոնք նվազեցնում են Հիմնադրամի ընդհանուր հարկային պարտավորությունները: Մինչդեռ ղեկավարությունը ներկայումս գնահատում է, որ իր կողմից ընդունված հարկային մեկնաբանությունները, ամենայն հավանականությամբ, կարող են պահպանվել, սակայն հնարավոր ռիսկ կա, որ կարող է լրացուցիչ ռեսուրսների արտահոսք պահանջվել, եթե նման մեկնաբանությունները վիճարկվեն հարկային մարմինների կողմից: Ցանկացած նման վիճարկելի իրավիճակի ազդեցությունը հնարավոր չէ արժանահավատորեն գնահատել. այնուամենայնիվ, դա կարող է նշանակալի ազդեցություն ունենալ Հիմնադրամի ֆինանսական վիճակի և/կամ ընդհանուր գործունեության վրա:

Հայաստանի Հանրապետության տրանսֆերային գնագոյացման մասին օրենսդրությունը, ընդհանուր առմամբ, համապատասխանում է Տնտեսական համագործակցության և զարգացման Հիմնադրամի (ՏՀԶԿ) կողմից մշակված տրանսֆերային գնագոյացման միջազգային սկզբունքներին, թեև այն ունի հատուկ առանձնահատկություններ: Տրանսֆերային գնագոյացման մասին օրենսդրությունը նախատեսում է վերահսկվող գործարքների (կապակցված կողմերի միջև գործարքներ և չկապակցված կողմերի միջև որոշակի գործարքներ) լրացուցիչ հարկային գնահատման հնարավորություն, եթե այդպիսի գործարքները չեն իրականացվել պարզած ձեռքի գործարքով: Ղեկավարությունը ներքին վերահսկողություն է իրականացրել՝ գործող տրանսֆերային գնագոյացման օրենսդրությանը համապատասխանելու նպատակով:

Վերահսկվող գործարքներից առաջացող հարկային պարտավորությունները որոշվում են դրանց փաստացի գործարքների գների հիման վրա: Հնարավոր է, որ տրանսֆերային գնագոյացման կանոնների մեկնաբանության փոփոխությունների հետ մեկտեղ, նման գները վիճարկվեն: Ցանկացած նման վիճարկելի իրավիճակի ազդեցությունը հնարավոր չէ արժանահավատորեն գնահատել. այնուամենայնիվ, դա կարող է նշանակալի ազդեցություն ունենալ Հիմնադրամի ֆինանսական վիճակի և/կամ ընդհանուր գործունեության վրա:

24 Կապակցված կողմեր

Կողմերը սովորաբար համարվում են կապակցված, եթե կողմերը գտնվում են ընդհանուր վերահսկողության ներքո կամ եթե կողմերից մեկն ունի մյուս կողմին վերահսկելու ունակություն կամ կարող է էական ազդեցություն կամ համատեղ վերահսկողություն իրականացնել մյուս կողմի վրա՝ ֆինանսական և գործառնական որոշումներ կայացնելիս: Յուրաքանչյուր հնարավոր կապակցված կողմի հարաբերությունները դիտարկելիս ուշադրություն է դարձվում հարաբերությունների էությանը, այլ ոչ թե միայն իրավական կողմին: Հիմնադրամի կապակցված կողմերը ներառում են ընդհանուր վերահսկողության տակ գտնվող ընկերությունները, հիմնական ղեկավար անձնակազմը և այլն, ինչպես նկարագրված է ստորև:

24.1 Գործարքներ կապակցված կողմերի հետ

Հաշվետու տարվա ընթացքում Հիմնադրամի և իր կապակցված կողմերի միջև իրականացվել են հետևյալ գործարքները, և հաշվետու ամսաթվի դրությամբ մնացորդները հետևյալն են:

Հազար դրամ Գործարքներ	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Ընդհանուր վերահսկողության տակ գտնվող ընկերություններ		
Ստացված նվիրատվություններ	177,213	298,971
Ծառայությունների ձեռքբերում	305,862	260,392
Տոկոսային եկամտի հաշվեգրում	29,137	25,606

Հազար դրամ Մնացորդներ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ընդհանուր վերահսկողության տակ գտնվող ընկերություններ		
Մնացորդներ բանկում	1,204,689	1,401,809
Ֆինանսական ներդրումներ	419,851	214,193
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	19,174	28,958
Եկամտին վերաբերող շնորհներ	42,490	56,041
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	36,502	56,062

24.2 Գործարքներ ղեկավարության և նրանց անմիջական ազգականների հետ

Հիմնական ղեկավար անձնակազմը ներառում է տնօրենին, բիզնես և վարչական գծով ղեկավարին, ֆինանսական տնօրենին և գլխավոր հաշվապահին:

Հիմնական ղեկավար անձնակազմը տարվա ընթացքում ստացել է հետևյալ վարձատրությունը, որը ներառված է «անձնակազմի հետ կապված ծախսեր» հոդվածում.

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Աշխատավարձ և պարգևատրումներ	129,112	153,741
Պարգևատրումներ և այլ վարձատրություններ	18,614	16,325
Մատուցված ծառայություններ	13,741	-

Հազար դրամ Մնացորդ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Արձակուրդային օրերի պահուստ	9,527	10,082

Signer: ՀՀ ՊԵԿ
Date: 01.07.2024 14:57